


1920  
342(47)  
9-63

13434

2010





342 (A7)

9-63

ԱՊՐԻԷՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԷՔ!

Ն. ԳԼԵԲՈՎ



ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ

ՕՐԵՆԲԸ

Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրության Հուսարանութիւնը.



27

7368

028  
19-8441

PROVID  
3ad

1057  
3ad

340

1776-9L

051

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՍՅԵՔ

Ն. ԳԼԵԲՈՎ

### ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Շեղերասիւ Հանրապետութեան Մահմանադրութեան Լուսաբանութիւնը.

Սմեն մի երկիր իր օրէնքներն ունի:

Եւ եթէ մեր գիւղացին կամ բանւորն ուղեւան մի ուրիշ երկիր գնալ, այնտեղ էլ ուրիշ օրէնքների կը հանդիպեն նրանք:

Եթէ ոուս գիւղացին գնայ Ֆրանսիա և ուղեւայ ամուսնանալ, նա անպայման պիտի գնայ Նոտարիատ\*), մինչդեռ Անգլիայում նա կարող է ընտրութիւն անել եկեղեցու և նոտարիատի մէջ, այսինքն քաղաքական և եկեղեցական ամուսնութեան մէջ: Մեզ մօտ Ռուսաստանում, նա պէտք է գնար տէրտէրի մօտ, ապա թէ ոչ ամուսնութիւնը կը համարէր ապօրինի:

Եւ շատ այսպիսի օրինակներ կարելի էր թելել:

Բայց իւրաքանչիւր երկրում, բացի կանոններից, հիմունքներից ու կարգադրութիւններից, գոյութիւն ունի նաև օրէնքը, որ որոշում է երկրի պետական կազմը, նրա տմբողջ կեանքը—այսպիսի օրէնքը կոչւում է հիմնական-սահմանադրական:

Հիմնական օրէնքը որոշում է պետական կազմի մայր-սկզբունքը և քաղաքացիների հիմնական իրաւունքները:

Հիմնական օրէնքները զանազան երկրներում տարբեր են: Օրինակի համար Ֆրանսիայում բուրժուական հանրապետութիւն է, որի զլուխն է կանգնած պարլամենտը և նախագահը: Անգլիայում սահմանադրական միապետութիւն է, երկիրը կառավարում է թագաւորը, բայց իր գործողութիւնների համար պատասխանատու է պարլամենտի առաջ:

Բայց չնայելով այդ տարբերութիւններին, բոլոր երկրների բոլոր օրէնքները արտայայտում ու պաշտպանում են հարուստների շահերը ընդդէմ չքաւորների, շահագործողներինը ընդդէմ շահագործւողների:

Աշխարհումս չկայ մի երկիր, ուր գոյութիւն չունենան օրէնքներ, բայց և չկայ մի երկիր, ուր հիմնական օրէնքը նման լինի Խորհրդային Ռուսաստանի օրէնքին:

\*) Նոտարիատը մի հիմնարկութիւն է, ուր վաւերացնում և հաստատում են ամեն տեսակի պայմանագրեր:

12001

Միայն մեզ մօտ հիմնական օրէնքը այնպէս է տնօրինում ամբողջ պետական կեանքը, որ աշխատաւորների շահերն է արտայայտում:

Ռուսաստանում միապետութեան տապալումով, քանդակեց նաև հին օրէնքը: Ժամանակաւոր բուրժուական կառավարութիւնը Սահմանադիր ժողովի միջոցով, կամենում էր անցկացնել հարուստների նոր օրէնք, Ռուսաստանի նոր, մի քիչ ներկած սահմանադրութիւն, ուրիշ կապիտալիստական երկրների օրինակով:

Սակայն այդ նրան չյաջողեց:

Սահմանադիր ժողովի առաջի նիստին աշխատաւորների ներկայացուցիչների կողմից առաջարկեց հաստատել շահագործող ժողովրդի իրաւունքների դեկլարացիան\*): Բայց բուրժուական մեծամասնութիւնը, ակընյայանի կերպով դէմ լինելով բանւորներին ու գիւղացիներին, չկամեցաւ ընդունել դեկլարացիան և այն՝ Ռուսաստանի ապագայ պետական կառուցւածքի հիմքը դարձնել: Նա կամեցաւ իր օրէնքներն ստեղծել, որ պիտի պաշտպանէին հարուստների շահերը: Սակայն բանւորներն ու գիւղացիները պէտք չունէին այդպիսի օրէնքների և բուրժուական Սահմանադիր ժողովը տապալեց:

«Սահմանադիր» փոխարէն հրաւիրեց Բանւորների, Գիւղացիների և Զինւորների Պատգամաւորների Սորհուրդը՝ Բանւոր-գիւղացիական 3-րդ Համառուսական Համագումարը:

Աշխատաւոր Ռուսաստանի 916 ներկայացուցիչները միաձայն ընդունեցին իրենց իրաւունքների դեկլարացիան:

Այս դեկլարացիան 5-րդ Համագումարի հաստատած Սորհրդային Հանրապետութեան Սահմանադրութեան հետ միասին կազմում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սորհրդային Հանրապետութեան հիմնական օրէնքը:

Այս օրէնքն արդէն ոյժ է ստացել և իւրաքանչիւր աշխատաւոր պարտաւոր է ծանօթանալ իր սեփական երկրի օրէնքների հետ: Այժմ մենք մեր օրէնքն ունենք, ստեղծած հէնց իրեն ժողովրդի ձեռքով և ամեն մի գիւղացի ու բանւոր չի կարող չիմանալ այն, ինչ որ իրենք են ստեղծել:

1. Ռուսաստանը յայտարարում է Բանւորների, Զինւորների և Գիւղացիների Պատգամաւորների Հանրապետութիւն. Ամբողջ իշխանութիւնը թէ կենտրոնում և թէ տեղեւորում պահանում է այդ Սորհրդների:

Այս հիմնական կէտով Ռուսաստանում նոր կազմ է հաստատում, որ ոչ մի երկրում գեռ ևս գոյութիւն չի ունեցել: Ռուսաստանը յայտարարում է աշխատաւորների Հանրապետութիւն և նրանց է արւում ամբողջ իշխանութիւնը մեր երկրի մեծ քաղաքներից սկսած մինչև յետ ընկած ու խոլ գիւղերը: Այս յայտարարութեամբ չքաւորների վրայ ունեցած հարուստների իշխանութեանը վերջ է արւում:

\*) Դեկլարացիա նշանակում է հանդիսաւոր յայտարարութիւն:

Մինչև այժմ բուրժուական աշխարհը երկու տեսակի հանրապետութիւն էր իրանից ներկայացնում—բուրժուական՝ ցենզաւոր\*) ներկայացուցչութեամբ պարլամենտի մէջ և դեմոկրատական՝ ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատուութեամբ ընտրովի հիմնարկութիւնների մէջ: Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում բուրժուազիան իրեն էր վերապահում բանւորների և գիւղացիների վրայ իշխելու իրաւունքը: Եւ միայն Սորհուրդների Հանրապետութեան մէջ է վերջ արւած այդ տիրապետութեան:

Աշխատաւորական պարլամենտում տեղ չունի բուրժուազիան: Նրա ձեռքից խլում է իշխանութիւնը և արւում է աշխատաւորներին:

2. Որպէս Սորհրդային Ազգային Հանրապետութիւնների Ֆեդերացիա՝ Ռուսաստանի Սորհրդային Հանրապետութեան հիմքն է կազմում ազատ ազգերի ազատ միութիւնը:

Ռուսաստանում բազմաթիւ ժողովուրդներ են ապրում—լեհացիք, ուկրայնացիք, ֆինլանդացիք, լատիշները, էստոնները, մորզաւացիք, չեքեմիսները, թաթարները, վրացիք, հայերը և ուրիշ շատերը:

Այս ժողովուրդներից իւրաքանչիւրը այս և կամ այլ ժամանակ մի ազգային ամբողջութիւն էր ներկայացնում իրանից, սակայն պայքարի մէջ թոյլերը հպատակել են աւելի ուժեղներին և այսպիսով մի ժողովրդի ազգային առանձնայատկութիւնները ոչնչացել են և ընկել աւելի ուժեղ հարևանների տիրապետութեան տակ:

Օտար հողերի բռնագրաւումը, մանր ժողովուրդներին տիրապետելը աւելի խոշորների կողմից՝ Եւրոպական երկրների բուրժուազիայի գլխաւոր նպատակն է եղել:

Ռուսաստանն այժմ յայտարարում է ազատ խորհրդային ազգային հանրապետութիւնների ֆեդերացիա, այսինքն ինքնուրոյն պետութիւնների միութիւն:

Կարող են ընտրել և ընտրել, այլ նա՝ ով, օրինակի համար, դրամագլուխ ունի և կամ ով ընակարանային որոշ տուրք է վճարում և այլն:

Ռուսաստանի հողի վրայ ապրող որևէ ազգութեան բանւորներն ու գիւղացիները իրաւունք ունեն ապրելու իրենց ինքնուրոյն կեանքով: Իրենց փոխյարաբերութիւնները դէպի Ռուսաստանի Սորհրդային կառավարութիւնը իրենք կարող են մշակել: Բայց այդ փոխյարաբերութիւնները պարզ են և հասկանալի—բուրժուաների և կալւածատէրերի դէմ մղող պայքարի մէջ բոլոր ազգութիւնների ու գիւղացիների շահերը նոյնն են:

3, Բանւոր., Զին. և Գիւղ. Պատգ. Սորհուրդների III Միջազգային Համագումարը՝ հիմնական նպատակ ունենալով—ոչնչացնել մարդկանց փոխադարձ շահագործումը, վերացնել հասարակութեան դասակարգային բաժնումը, անխնայ կերպով ձնչել հարստահարիչներին, հասարակութեան սոցիալիստական ազմակերպումը և բոլոր երկրների

\*) Ցենզաւոր ներկայացուցչութիւն—նշանակում է, երբ ոչ բոլորը

մէջ սոցիալիզմի յաղթանակը, — յայտարարում է նաև հետևեալը. ա) Հողի համայնացումը իրականացնելու համար, մասնաւոր հողատիրութիւնը ոչնչացուում է, հողային ֆոնդը յայտարարուում է համաժողովրդաբան սեփականութիւն և յանձնուում է աշխատաւորներին առանց յետ գնման, (выкуп), հողից հաւասարապէս օգտուելու հիման վրայ (уравнительное землепользование):

Բանւորներն ու գիւղացիները, տապալելով կալաճատիրոջ իշխանութիւնը, պէտք է ոչնչացնէին նաև այդ իշխանութեան հիմքը կալաճատէրերից պէտք է խլէին հողը և այդպիսով վերջ դնէին չքաւորների աշխատանքների շահագործմանը հարուստների կողմից: Օրէնքով հողը դառնում է ընդհանուր ժողովրդական սեփականութիւն: Կալաճատէրերից հողը վերցւում է ձրիաբար և բաժանուում է բոլորին՝ հաւասարութեան սկզբունքի հիման վրայ:

Բոլոր հողերը — պետական, կալաճական (удельные), պաշտօնական, վանքական, եկեղեցական, մասնաւոր — տրուում են այդ հողերի վրայ աշխատողներին: Հողից օգտուում են համահաւասար կերպով, այսինքն ամեն մի աշխատաւոր հաւասար բաժին է ստանում, ինկատի առնելով տեղական պայմանները և աշխատանքի նորման:

Սակայն հողը հաւասար կերպով բաժանելը դեռ ևս բաւական չէ: Սա դեռ սոցիալիզմ չէ:

Ի՞նչ օգուտ, որ օրինակ, Գոլոդակա գիւղի չքաւորները հարեան կալաճատիրոջ հողը բաժանեցին իրար մէջ և նրանցից իւրաքանչիւրը մի դեսեսատինի տեղ ունենայ, օր. համար, տասը դեսեսատին, բայց կարգ ու սարք (инвентар) և անասուն չունենայ:

Վերցնենք, օր. համար Սիբիրի գաղթականին. երբ նա գաղթել է Սիբիր, ստացել է 15 դեսեսատին, իսկ մշակել է միայն երեքը: Ինչո՞ւ: Որովհետև նա չի ունեցել ոչ ձի և ոչ էլ կարգ ու սարք, նա մերկ է եղել, ինչպէս մօրից ծնւած ժամանակ:

Նոյն բանն էլ այժմ կը լինի: Բայց որպէսզի այդ չպատահի, որպէսզի գիւղում ճշմարիտ սոցիալիզմ լինի, հարկաւոր է ոչ միայն հողը հաւասար բաժանել, այլ և անհրաժեշտ է տնտեսութիւնն այնպէս կազմակերպել, որ նա շահ բերի թէ չքաւորին և թէ պետութեան:

Իսկ այդ նպատակին կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ համայնական տնտեսութեան կազմակերպութիւն լինի, երբ հողն ընդհանուր ոյժերով մշակելի: Այդ դէպքում թէ անասուն և թէ կարգ ու սարք աւելի քան կը պահանջւի և աւելի հեշտ կարելի կը լինի կատարելագործւած մեքենայով հողը մշակել: Օգուտն ու շահը կը ստիպեն չքաւորին համայնօրէն կազմակերպւել:

բ) Բոլոր անտառները, հանքերը և ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող ջրերը ինչպէս և կենդանի ու անկենդան կարգն ու սարքը, օրինակելի կալաճքները, գիւղատնտեսական ձեռնարկութիւնները յայտարարուում են ազգային սեփականութիւն:

Անտառները և գետնի տակ գտնուող հարստութիւնները և ջրերը, եթէ նրանք ընդարձակ են, մեծ և անհրաժեշտ են համապետական կարիքների համար, պէտք է ժողովրդական սեփականութիւն դառնան: Միայն կենտրոնի և տեղերի պետական իշխանութիւնը կարող է կարգադրութիւններ անել անտառների, հանքերի, ջրերի վերաբերմամբ, նայած թէ հարստութիւնները ինչ արժէք և ինչ նշանակութիւն ունեն: Սակայն այդ չի նշանակում, որ գիւղացին իր խրճիթի համար ատաղձ և վառելիքի համար փայտ չի ստանալու. չի նշանակում, որ իրաւունք չպիտի ունենայ գետում ձուկ որսալու և քար կտրելու գետնի աակից: Նա այս բոլորն անելու իրաւունք պիտի ունենայ, միայն պիտի անէ կազմակերպւած, իրենց Խորհուրդների, վիճակային (вопoстной) կոմիտէների և չքաւորների կոմիտէների միջոցաւ:

Ամբողջ կենդանի ու անկենդան կարգն ու սարքը, բարեկարգ կալաճքները և գիւղատնտեսական ձեռնարկութիւնները դառնում են ժողովրդական սեփականութիւն: Բայց օրէնքը թոյլ չի տալիս պարզ կերպով բաժանել այն բոլորը, ինչ որ խլած է կալաճատիրոջից: Օրէնքն իրաւունք է տալիս գիւղացուն օգտուել շոգեշարժ գութանից, ազնւատոհմ ձիերից ու կովերից, դարձեալ կազմակերպւած խորհուրդների, չքաւորների կոմիտէների հսկողութեան տակ: Չի կարելի թոյլ տալ, որ գիւղացին իւրացնելով շոգեշարժ գութանը, իր սեփականութիւնը համարէ այն, — ոչ, այդ գութանը բոլորի սեփականութիւնն է և ամենից առաջ նրանցը, որ այս գութանով կազմակերպւած ու միասին մշակում են հողը:

Հին կարգերից և կալաճատէրերից շատ բարեկարգ կալաճքներ և լաւ կազմակերպւած ամեն տեսակի գիւղատնտեսական ձեռնարկութիւններ են մնացել: Այս բոլորը բաժան-բաժան չպիտի անել: Չի կարելի բաժանել ֆաբրիկան կամ լաւ դրւած տնտեսութիւնը քար ու քանդ անել: Այս բոլորը պէտք է պահել և աշխատել աւելի լաւ հիմքերի վրայ դնել: Այս բոլորի մասին պէտք է հոգ տանին կառավարութիւնը կենտրոնական և տեղական հիմնարկութիւնների մէջ գիւղացիները կաշխատեն վարձով, բայց նրանք ոչ թէ կը շահագործւեն, ուրիշի շահի համար կաշխատեն, ինչպէս այդ լինում էր կալաճատէրերի ժամանակ, այլ սոցիալիստական հայրենիքի հարստութիւնը շատացնելու համար, այսինքն հէնց իրենց աշխատաւորների շահերի համար:

գ) Ֆաբրիկաները, գործարանները, հանքերը, երկաթուղիները և այլ արտադրական ու փոխադրական միջոցները Բանւոր-Գիւղացիական Խորհրդաւոյին Հանրապետութեան փոխանցելուց ու նրա սեփականութիւնը դարձնելուց յետոյ, հաստատուում է խորհրդային օրէնք՝ բանւորական կոնտրոլ և ժողովրդական Տնտեսութեան Բարձրագոյն խորհուրդ՝ շահագործողների վրայ ունեցած աշխատաւորների տիրապետութիւնն ապահովելու նպատակով:

Վերջ դնելով կալաճատէրերի իշխանութեանը ժողովրդական հողի վրայ և նրանց մասնաւոր հողատիրութեանը, առաջին քայլն է առնուում

ոչնչացնելու համար ֆաբրիկաների և գործարանների մասնաւոր տիրապետութեանը. Նա գործարանների և ֆաբրիկաների վրայ հաստատում է բանւորական վերահսկողութիւն:

Բայց ինչո՞ւ Բանւորա-Գիւղացիական կառավարութիւնը միանգամից չիւրաց կապիտալիստների ձեռքից ֆաբրիկաներն ու գործարանները: Որովհետեւ հողը բաժանելն աւելի դիւրին է, քան թէ ֆաբրիկան կամ գործարան կառավարելը: Բանւորը չի կարող միանգամից ֆաբրիկա կամ գործարան կառավարել—նա դեռ պէտք է սովորի: Չեռնարկութիւնները կառավարելու համար հարկաւոր են տեխնիկներ, ինժեներներ և փորձաձեռն մեքենագործներ,—սրանք բոլորն աւելի մօտ էին կանգնած բուրժուազիային և երբ իշխանութիւնն անցաւ բանւորների և գիւղացիների ձեռքը, նրանց մեծամասնութիւնը անցաւ սաբոտաժիկների կողմը. Ռուսաստանի ամբողջ արդիւնաբերութիւնը մեր ձեռքին պահելու համար, ստեղծագործական հսկայական ոյժեր են պահանջուում: Եւ միայն այժմ, հոկտեմբերեան յեղափոխութիւնից ութ ամիս անց, մեր արդիւնաբերութեան ձեռնարկները ամբողջ պետութեան սեփականութիւնը դարձան: Չափազանց դժւար էր միանգամից վերջ դնել մասնաւոր սեփականութիւն կողմող արտադրութեան միջոցներին—ժամանակ և ոյժեր են հարկաւոր: Այդ գործի մի մասն արդէն արւած է, միւս մասն էլ պէտք է անել: Իսկ բանւորների շահերն ապահովելու համար գործարանների և ֆաբրիկաների վրայ հաստատուած է բանւորական վերահսկողութիւն: Օրէնքն իրաւունք է տալիս գործարանի բանւորական կոմիտէին և բանւորական վերահսկիչ մասնաժողովին հսկել ձեռնարկութիւնների ընթացքի և ֆաբրիկաների ու գործարանային վարչութեան գործունէութեան վրայ:

Խորհրդային իշխանութեան յետագայ քայլը կը լինի, դուրս կորզել, տէրերի ձեռքից ֆաբրիկաները և վաճառականների ձեռքից խանութներն ու պահեստները,

դ) Խորհուրդների Երրորդ Համագումարը քննութեան է առել ցարական կառավարութեան, կալւածատէրերի և բուրժուազիայի կողմից կատարուած փոխառութիւնների ոչնչացման օրէնքը և այդպիսով առաջին հարւածն է հասցնում բանկային, ֆինանսական միջազգային կապիտալին. պէտք է յուսալ, որ Խորհրդային իշխանութիւնը հաստատուն կերպով կընթանայ այդ ուղիով, մինչև որ կապիտալի լծի դէմ ապստամբած միջազգային բանւորութիւնը իր կատարեալ յաղթանակը տանի:

Բանւորա-գիւղացիական կառավարութիւնը տապալելով ոռւս բուրժուազիայի իշխանութիւնը և ոչնչացնելով նրա բոլոր արտօնութիւնները, խզում է իր կապը նաև օտարերկրեայ գիշատիչներին—կապիտալիստների հետ: Նա ոչնչացնում է այն փոխառութիւնները, որ կատարել են ոռւսական ցարը, կալւածատէրերը և ֆաբրիկաները անգլիական, ֆրանսիական գերմանական և այլն բուրժուազիայի հետ:

Ամբողջ պատերազմի ընթացքում մեզ մօտ 56 միլիարդի արտա-

քին ու ներքին փոխառութիւններ է կատարել: Եւ այժմ մենք ստիպուած պիտի լինէինք օտար կապիտալիստներին հնչուն սկզբ 19 միլիարդ բուրժի վճարել: Եւ ինչո՞ւ համար: Թնդանօթների, ոււմբների, ռազմանաւերի համար,—այն բոլորի համար, որ մեզ օտար գիշատիչները տալիս էին արիւնահեղ սպանդի համար: Ռուսաստանի բանւորներն ու գիւղացիներն չեն ուզում վճարել այդ պարտքերը. չեն կամենում օտար կապիտալի ճորտը լինել:

ե) Բոլոր բանկերը բանւորա-գիւղացիական կառավարութեան սեփականութիւնն են դառնում և այս՝ աշխատաւորական մասսաներին կապիտալի լծից ազատելու պայմաններից մէկն է նկատուում:

Այս օրէնքի հիման վրայ Խորհրդային Հանրապետութիւնը բոլոր մասնաւոր բանկերը առնում է մասնաւոր սեփականատէրերի-բանկիրներին և կապիտալիստների ձեռքից-և դարձնում է համաժողովրդական սեփականութիւն: Մինչև հիմա կապիտալիստների ձեռքերում բանկերն ամենագորաւոր գործիքն էին հանդիսանում բանւորական մասսաները ստրկացնելու համար: Բանկիրները և գործարանատէրերը բանւորների ու գիւղացիների դէմ միշտ համերաշխ են գործել. Բանկերում է կենտրոնացած եղել ժողովրդական հարստութեան մի հսկայական քանակութիւն.—այդ բոլորը մի լիօնատէրերի մի փոքրիկ խմբակի սեփականութիւնն է եղել:

Օրէնքը, ոչնչացնելով հարուստների շահագործումը աշխատանքի, ոչնչացնում է նաև այդ շահագործման բոլոր զէնքերը—ի միջի այլոց և բանկերը: Այսօրւանից նրանք դառնում են բոլոր աշխատաւորների սեփականութիւն և միանալով կազմում են Խորհրդային Հանրապետութեան ժողովրդական մի պետական ըսնկ:

զ) Հասարակութեան տղրոկ տարրերը ոչնչացնելու և տնտեսութիւնը կազմակերպելու համար ընդհանուր պարտադիր աշխատանք է սահմանուում:

Բուրժուազիան, կալւածատէրը և կապիտալիստները դարեր շարունակ վարժել են ապրել առանց ոչինչ անելու, կողոպտելով բանւորներին ու գիւղացիներին: Նրանք ուսումնագէտ կառավարիչներ էին վարձում, նստեցնում էին նրանց կալւածքներում, իսկ իրենք ուղևորուում էին արտասահման և կողոպտած օգուտն ստանալով, ապրում էին անփոյթ:

Եւ այժմ, երբ այդ շահագործմանը վերջ է դրւած, երբ «աղտոտները» իրենց ձեռքն են վերցրել իշխանութիւնը, կալւածատէրերը, կապիտալիստներն ու չինովնիկները կողոպտելուց ու դրամները թաղցնելուց յետոյ, որոշել են հանգիստ ապրել, ոչ մի մասնակցութիւն չունենալ ժողովրդական աշխատանքի մէջ՝ Նրանցից շատերը ուղղակի ապրոսաժնիկներ եղան, չուղեցին օգնել բանւորներին ու գիւղացիներին:

Այս տղրուկներին սպանելու համար, օրէնքը ընդհանուր պարտադիր աշխատանք է սահմանում: Այդ նշանակում է՝ ով ուզում է կուշտ լինել, հագնել և տաք բնակարանում ապրել, պարտաւոր է աշխատել:

Ներկայումս իհարկէ, դժւար է այս չարիքի դէմ կռւել: Բայց երբ ամ-

բողջ առևտուրը կանցնի պետութեան ձեռքը, երբ միայն բանւորը կը կարողանայ խորհրդային խանութներէից գնել իրեն պէտք եղած բաները, այն ինչ տգրուկը ոչինչ չի կարող ստանալ, որովհետև նա չունի բանւորական գրքոյկ, ուր նշանակուած են աշխատած ժամերի թիւը: Սոցիալիստական կարգերի ժամանակ ամենքը պիտի աշխատեն:

է) Աշխատաւոր մասսաների գերիշխանութիւնն ապահովելու և շահագործողների իշխանութիւնը կրկին վերահաստատելու հնարաւորութիւնն ի չիք դարձնելու նպատակով, որոշուած է զինել աշխատաւորներին, բանւորներից ու գիւղացիներից Կարմիր բանակ կազմելու և ունենոր դասը կատարելապէս զինաթափ անել:

Նախկին մշտական զօրքը տիրապետող դասակարգերի՝ կապիտալիստների և կալւածատէրերի ձեռքին եղել և զէնք—բանւորական և գիւղացիական մասսաները ստրկացնելու համար: Զօրքը Ռուսաստանի ինքնակալութեան համար մի պատուար է եղել: Նա այնպէս է կազմակերպուած եղել, որ ամենայն հաւատարմութեամբ ծառայել է կողոպտման, գիշակերութեան և շահագործման: Այս զօրքի գլուխ կանգնած էր արտօնեալ դասակարգը—ազգաբնականութիւնը: Սպաները պատկանում էին կալւածատէրերի վոհմակին: Եւ նրանք զօրքին այնպէս էին կրթում ու կազմակերպում, որ նա դարեր շարունակ հլու-հնազանդ է եղել նրանց: Սակայն սրան էլ վերջ է դրւած: Եւ ցարական զօրքը ապստամբւեց և տապալեց ոչ միայն ցարին, այլ և կապիտալիստներին ու կալւածատէրերին:

Բանւոր-գիւղացիական կառավարութիւնը ոչնչացրեց մշտական զօրքը և նրա փոխարէն կազմակերպեց Կարմիր զօրքը: Այս զօրքը այնպէս է դաստիարակուած, որ ամեն մի վայրկեան կարող կը լինի պաշտպանել ոչ թէ մի բուռն հարուստների շահերը, ինչպէս այդ անուամ էին առաջ, այլ ամբողջ աշխատաւոր ժողովրդի շահերը:

Այս զօրքը պիտի կազմուած լինի միայն աշխատաւորներից, միայն բանւորներից ու գիւղացիներից: Հասարակ զինւորից սկսած մինչև վերին հրամանատարը,—բոլորը բանւորներ ու գիւղացիներ պիտի լինեն: Ունենոր դասակարգերի ներկայացուցիչները տեղ չպիտի ունենան սոցիալիստական զօրքի շարքերում: Իսկոյն և եթ այդ բանն անել անկարելի է, բանւորներն ու գիւղացիները դեռ ևս բաւարար չափով պատրաստուած չեն հին գեներու կրկններին փոխարինելու համար: Բայց մեր կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է բանւորներին և գիւղացիներին սովորեցնել սեփական զօրքը կառավարելու արհեստը:

4. Սորհուրդների III Համագումարը հաստատապէս վճռած լինելով դուրս կորզել մարդկութիւնը՝ Ֆինանսական կապիտալի, իմպերիալիզմի և երկիրն արիւնով ոռոգող ներկայ ոճրապատ պատերազմի ճանկերից, միանում է Մորհրդային իշխանութեան վարած քաղաքականութեան, այն է ոչնչացնել գաղտնի դաշնագրերը կուռղ կողմեմի բանւորների ու գիւղացիների եղբայրացնելը ամենալայն չափով, յեղափոխական միջոցներով ամեն կերպ աշխատել ձեռք բերել հաշտու-

թիւն առանց անեկսիայի և պատերազմական տուգանքի, հիմնւելով ազատ ինքնորոշման վրայ:

Մեծ երկրների աւաղակ-կապիտալիստները վաղուց իրար մէջ գաղտնի դաշնագրեր են կազմել: Այս դաշնագրերի հիման վրայ, նրանք խօսք մէկ են արել շահաւէտ կերպով բաժանել երկիրը, աւելի յարմար և ձեռնտու կերպով կողոպտել մանր ժողովուրդները: Իսկ վերջիններս բաւական շատ են: Գերմանիան ախորժակ ունէր խլել Հնդկաստանը, Անգլիան՝ Պարսկաստանը, իսկ Ռուսաստանը՝ Հայաստանը և այլն:

Նրանց ինչի՞ն են պէտք այդ երկիրները: Միթէ՝ Ռուսաստանն ինքը քիչ սեփական հողեր ունի:

Նրա համար, որ կողոպտեն փոքր «անքաղաքակիրթ» ազգերին. իրենց ապրանքները սաղացնեն երեք անգամ աւելի թանկ գնով. այնտեղից հում նիւթեր ձեռք բերեն նոր ապրանքներ արտադրելու համար, աւելի ու աւելի հարստանան:

Այդ գաղտնի դաշնագրութիւններին հետեց համաշխարհային պատերազմը, ամբողջ երկիրը հարուստների մէջ բաժանելու համար:

Երբ մենք ապստամբութիւն բարձրացրինք այդ աւաղակային պատերազմին վերջ տալու համար, ամենից առաջ պահանջեցինք հրատարակել գաղտնի դաշնագրերը: Կերենսու կառավարութիւնը չուզեցաւ այդ անել. այն ժամանակ բանւորներն ու գիւղացիները տապալելով բուրժուազիայի իշխանութիւնը, հրապարակ հանեցին գաղտնի դաշնագրերը ի լուր ամբողջ աշխարհի:

Եւ բանից դուրս եկաւ, որ այդ գաղտնի դաշնագրերը միայն մի նպատակ են ունեցել—որքան կարելի է շատ կողոպտել, խլել ուրիշների հողերը, յիմարացնել բանւորներին ու գիւղացիներին և նրանց ստիպել կուռղ բուրժուաների և կալւածատէրերի շահերի համար,

Հարկաւոր էր վերջ դնել այդ ոճրապատ պատերազմին միայն աշխատաւորների ջանքերով, քաղաքների և գիւղերի բանւորների ու գիւղացիների և ճակատի գիւնւորների ջանքերով: Մենք պահանջեցինք վերջ դնել պատերազմին, մենք յայտարարեցինք ամբողջ երկրի աշխատաւորներին, որ մենք դուրս ենք գալիս այդ արիւնոտ սպանդանոցից և նրանց էլ կոչ ենք անում հետեւելու մեզ:

Մենք գիտէինք, որ գեմոկրատական հաշտութիւն կարելի է ձեռք բերել կուռղ երկրների բանւորների և գիւղացիների ջանքերով և ամենից առաջ Գերմանիայի: Դրա համար անհրաժեշտ էր ոչնչացնել այն պատնէշները, որ բաժանում են ուս գիւնւորին գերմանական գիւնւորից, աւստրիականներին—իտալականներից և այլն: Դեմոկրատական հաշտութեան համար մղուող ընդհանուր պայքարի համար հարկաւոր էր մի ճակատ (Ֆրոնտ) ստեղծել յեղափոխական բանւորներից ու գիւղացիներից, ինչ ազգի էլ նրանք պատկանելիս լինէին:

Եւ ուս յեղափոխական բանւորներն ու գիւղացիները ճակատում մի նոր միջոց սկսեցին կիրառնել գերմանացի նոյն տեսակի գիւղացիների և

բանւորները հետ յարաբերութեան մէջ մտրելու համար: Ռուս ազատագրւող բանակի իւրաքանչիւր զինւորի համար եղբայրացման գաղափարի իրադրծումը ամենալայն չափով՝ օրէնք դարձաւ: Այդ եղբայրացումն անհրաժեշտ էր ցնցելու համար գերմանացի զինւորներին, ստեղծելու համար մի ընդհանուր ճակատ ընդդէմ ռուս և գերմանացի բուրժուականների և կալւածատէրերի:

Մենք աշխատաւորների դեմոկրատական հաշտութեան համար կռիւ սկսեցինք, նպատակ չունենալով որևէ մէկի հողը խլելու, մենք պահանջում էինք վերջ դնել պատերազմին, չուզենալով ոչ ոքից վարձատրութիւն ստանալ զինւորական ծախքերի համար, մենք հաշտութիւն էինք ուզում, որից յետոյ ամեն մի ժողովուրդ ինքը կարող էր որոշել, թէ ում հետ է ուզում միանալ:

Սակայն այս պայքարի մէջ գերմանական պրոլետարիատն ու գիւղացիութիւնը հարկաւոր չափով նեցուկ չեղան մեզ համար, իսկ ժողովուրդը պահանջում էր վերջ դնել այդ արիւնահեղութեան, և բանւոր-գիւղացիական կառավարութիւնը ստիպւած եղաւ հաշտութիւն կնքել գերմանական աւազակների հետ: Մենք հարկադրւած էինք համաձայնել այդպիսի հաշտութեան և միայն այն վարկեանին ենք սպասում, երբ հնարաւոր կը լինի գերմանական յեղափոխական գիւղացիների և բանւորների հետ միասին պայքար սկսել գերմանական աւազակների դէմ:

5. Դարձեալ նոյն նպատակներով Սորհուրդների III Համագումարը պահանջում է խզել բոլոր կապերը բուրժուական քաղաքակրթութեան բարբարոս քաղաքականութեան հետ, որ մի քանի ընտրեալ ազգերի շահագործողների բարեկեցութիւնը հիմնում է Ասիայի, ընդհանրապէս գաղութների և մանր երկրների միլիոնաւոր աշխատաւորների ստրկացման վրայ:

Բոլոր մեծ երկրների—Անգլիայի, Ամերիկայի, Գերմանիայի և միւսների քաղաքականութիւնն է եղել՝ ստրկացնել, ճնշել ու կողոպտել մանր, այսպէս կոչւած, բարբարոս երկրների միլիոնաւոր աշխատաւորին: Ասիայում, Հարաւային Ամերիկայում, Աֆրիկայում և Աւստրալիայում եւրոպական կապիտալիստները անգթաբար էին վարում աշխատաւորների հետ: Այս երկրամասերը դարձրել էին իրենց գաղութներ, այնտեղ զօրքեր էին պահում և սևիների օգնութեամբ կողոպտում էին այդ երկրամասերը: Այդ խլած երկրներում նրանք կոտորում էին բնակիչներին, իրենց աժան, անպէտք ապրանքներով ողողում էին գրաւած երկիրը յիմարացնելով ու խաբելով անքաղաքակիրթ ժողովուրդը: Այդ բոլորը նրանք փոխանակում էին կաշի, սուրճի, բրնձի, ոսկու և այլ նիւթերի հետ: Մենք խզում ենք կապը կողոպտելու և յափշտակելու քաղաքականութեան հետ. մենք ուրիշի սեփականութիւնը չենք կամենում: Այդ պատճառով էլ՝ 6. Խորհուրդների III Համառուսական Համագումարը ողջունում է ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ֆաղափակեցումը, յայտարարում է Ֆիելմախայի լիակատար անկախութիւնը, Պարսկաստանից հեռացնում է գործերը, յայտարարում է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը:

Ռուսաստանի կառավարութիւնը յայտարարեց բոլոր զիշատիչներին, որոնք ոչ թէ իրականութեան մէջ, այլ բառերով են միայն կուռում մանր ժողովուրդների ազատագրման համար, որ ինքն իսկապէս աշխատում է Ռուսաստանում ապրող ժողովուրդների ազատագրման համար, նրանց իրաւունք տալով ինքնուրոյն կերպով որոշելու իրենց յարաբերութիւնները Ռուսաստանի և ուրիշ պետութիւնների հետ:

7. Բանւորական, Զինւորական և Գիւղացիական Սորհուրդների Համառուսական Համագումարը ենթադրում է, որ պրոլետարիատի շահագործողների դէմ մղւող վճռական պայքարի վայրկեանին, շահագործողները տեղ չպիտի ունենան իշխանութեան որևէ ճիւղի մէջ: շխանութիւնն ամբողջութեամբ պիտի պատկանի աշխատաւոր մասսաների և նրանց լիազօր ներկայացուցչութեան Բանւորական, Զինւորական և Գիւղացիական Պատգամաւորների Սորհուրդներին:

Բանւորներն ու գիւղացիները իշխանութիւնն իրենց ձեռքն առան ոչ թէ նրա համար, որ նրան կիսեն բուրժուաների ու վաշխառուների հետ: Ոչ մի համաձայնութիւն չի կարող լինել չքաւորների թշնամիների հետ:

Բոլոր պատասխանատու պաշտօնները պիտի լինեն յեղափոխական բանւորների ու գիւղացիների ներկայացուցիչների ձեռքին:

Ներկայումս վաշխառուները ներս են սպրդում դաւառային Սորհուրդների մէջ, որպէսզի այնտեղ իշխեն և խաբեն չքաւորներին: Վաշխառուի համար ձեռնառու է Սորհրդի մէջ լինել, և որքան նրանց թիւը շատ լինի այնտեղ, այնքան լաւ է նրանց համար. նրանք առաջւայ նման կըսկսեն գիւղը կողոպտել, հացը ծախել բարձր գներով:

Քաղաքային Սորհուրդներում տեղ չպիտի ունենան ոչ բուրժուաները, ոչ նրանց պօչը կազմող մենշելիկներն ու աջ էսերները, ոչ նրանք, որոնք պաշտպանում են Ֆարրիկանտներին և կալւածատէրերին, ոչ էլ նրանք, որ գտնւում են հակայեղափոխութեան կողմը և կուռում են բանւորների ու գիւղացիների և Բ., Զ. և Գիւղ. Պատգամաւորների Սորհուրդների իշխանութեան դէմ:

Օրէնքն այդ իշխանութիւնը ամբողջութեամբ տալիս է աշխատաւորների ձեռքը, միայն պէտք է այդ իշխանութիւնը իր ձեռքում պահելու ձևը գիտենայ, պէտք է երկիրը, նրա ամեն մի կտոր հողը կառավարելու ձևը գիտենալ: Այն ժամանակ մենք այնպիսի կը լինենք:

8. Դրա հետ միասին, ձգտելով ստեղծել ճշմարտապէս ազատ և կամաւոր, ուրեմն և աւելի հաստատուն ու կատարեալ միութիւն Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատաւոր դասակարգերի մէջ, Սորհուրդների III Համագումարը Ռուսաստանի Սորհրդային Հանրապետութիւնների Ֆեդերացիաների հիմնական սկզբունքներն է միայն հաստատում, թողնելով իւրաքանչիւր ազգի բանւորներին և գիւղացիներին ինքնորոյն կերպով, իրենց եսփական Սորհրդային, լիազօր համագումարում վճռել՝ կամենում են արդեօք, և ի՞նչ հիմունքներով մտնել ֆե

դերալ կառավարութեան և թորհրդային Ֆեդերալ Հիմնարկութիւնները մէջ:

Թորհրդային կառավարութիւնը Սոցիալիստական Ռուսաստանի Թորհրդային Հանրապետութիւնների ազատ միութիւն է հաստատում: Եւ եթէ ռուսական հողի վրայ ապրող այս կամ այն ազգի բանւորներն ու գիւղացիները ցանկանան իրենց ինքնուրոյն կեանքով ապրել, այդ անելու լիակատար իրաւունք ունեն: Այդ ազգերից իւրաքանչիւրը ինքնուրոյն կերպով կարող է որոշել իր յարաբերութիւնները կենտրոնական Թորհրդային կառավարութեան հետ: Մեր սոցիալիստական Հանրապետութեան մէջ չի կարող լինել ճնշում կամ նոյն իսկ բռնադատում Ռուսաստանում ապրող ազգերի նկատմամբ: Միայն կարևորն այն է, որ Թորհրդային բոլոր Հանրապետութիւնները համախմբւած՝ բուրժուազիայի դէմ դուրս գան միացած ոյժերով: Դրա համար անհրաժեշտ է, որ ոչ միայն Ռուսաստանի բանւորներն ու գիւղացիները միանան, այլ և ամբողջ աշխարհի աշխատաւորները: Սոյն օրէնքով հաստատում է, որ Ռուսաստանի Սոցիալիստական Թորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութիւնը կազմում է առանձին ազգային հանրապետութիւնների միութիւն: Եւ երբ Ուկրայնայի և Ֆինլանդիայի աշխատաւորները իրենց բուրժուաների իշխանութիւնը տապալեն և այնտեղ հաստատեն Թորհրդային իշխանութիւն, մեր օրէնքով, նրանք իրենք պիտի որոշեն, թէ ինչ հիմունքներով կը մասնակցեն Ռուսաստանի Սոցիալիստական Հանրապետութեան կենտրոնական կառավարութեան մէջ:

### ՌՈՒՍՆԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՓԵՊԵՐԱՏԻԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.

9. Ի նկատի առնելով ներկայ անցողական շրջանը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Թորհրդային Հանրապետութեան հիմնական խնդիրը նրանում է կայանում, որ քաղաքային ու գիւղական պրոլետարիատի և չքաւոր գիւղացիութեան զիկտատուրան հաստատել և ստեղծել Համառուսական Թորհրդային մի հզօր իշխանութիւն, որի նպատակը կը լինի՝ ոչնչացնել բուրժուազիան, ոչնչացնել փոխադարձ շահագործումը, հաստատել սոցիալիզմը, որի օրով այլևս չի լինի դասակարգային բաժանում և ոչէլ պետական իշխանութիւն: Հոկտեմբերին տապալւեց բուրժուաների և կալւածատէրերի իշխանութիւնը և այդ արեւց ոչ թէ նրա համար, որ մի երկու ամիս յետոյ համաձայնութեան գան Կիշկինների և Բուրիշկինների, հակա-յեղափոխական բանակի զանազան սրիկանների, մենշեիկների և աջ էսերների հետ, այն նրա համար, որ հատատուի բանւորների և չքաւոր գիւղացիների իշխանութիւնը: Հոկտեմբերեան յեղափոխութիւնից ութ ամիս առաջ կոմմունիստները պայքարում էին Թորհուրդների իշխանութեան համար և վերջապէս յաղթանակեցին:

Այժմ իշխանութիւնը Խորհունդների ձեռքին է: Իսկ ինչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, որ բանւոր դասակարգը և չքաւոր գիւղացիները՝ հաստատապէս վճռել են վերջ դնել ոչ միայն հարուստների և նրանց արբանեակների իշխանութեան, այլ և վերջ դնել բուրժուազիայի ամբողջ հզօրութեան:

Թորհուրդների իշխանութիւնն—այդ նշանակում է փոխադարձ շահագործման, հարուստի կողմից աղքատի շահագործման ոչնչացումը: Իշխանութիւնը Թորհուրդների ձեռքն անցնելուց յետոյ մենք արագ քայլերով մօտենում ենք սոցիալիզմի իրականացման:

Իսկ սոցիալիզմ նշանակում է՝ քաղաքում—արտադրութեան բոլոր միջոցները—մեքենաները, ֆաբրիկաները, առևտրական տները—անցնում են բանւոր դասակարգի ձեռքը, գիւղում—հողը, կայքը և այլն անցնում են գիւղացու ձեռքը, երկրում կազմակերպւում է համայնական (կոմունալ) տնտեսութիւն:

Իշխանութիւնը Թորհուրդների ձեռքն անցնելը նշանակում է ոչնչացում հարուստների ու աղքատների տարբերութեան: Դադարում է կողոպտելը, իւրաքանչիւր անհատ սկսում է իմաստալի ու արգասաւոր կեանքով ապրել, առանց մէկը միւսին հպատակելու:

Հետզհետէ իշխանութիւնը կորցնում է իր իմաստը: Սոցիալիստական Թորհրդային հանրապետութեան նոր կառուցւածքը այնպէս պէտք է կազմակերպւած լինի, որ նա դառնայ ազատ համայնքների ազատ գործակցութիւն: Եւ այն ժամանակ իշխանութիւնը կը դառնայ երկրի ամբողջ համայնական տնտեսութեան միայն գլխաւոր կազմակերպիչը:

10. Ռուսաստանի Հանրապետութիւնը Ռուսաստանի բոլոր աշխատաւորների ազատ սոցիալիստական սիւնկերութիւն է: Ռուսաստանի Սոցիալիստական Թորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութեան սահմաններում ամբողջ իշխանութիւնը պատկանում է երկրի աշխատող ազգաբնակչութեան, որ միացած են քաղաքային ու գիւղական Թորհուրդների միջոցով:

Ամբողջ իշխանութիւնը պատկանում է միայն բանւորներին ու գիւղացիներին և բոլոր նրանց, որոնք ապրում են ոչ թէ ուրիշի աշխատանքով, կողոպտելով ու յափշտակելով, այլ իրենց սեփական աշխատանքով: Այդ իշխանութիւնը պատկանում է ոչ թէ մի առանձին խումբ կողոպտիչների, այլ երկրի ամբողջ աշխատաւոր բնակչութեանը:

Բուրժուա-վաշխառուները և կալւածատէրերը տեղ չունեն աշխատաւոր ժողովրդի յարկի տակ: Բաւական է, որքան գիւղացին իր մէջը վրայ կրեց տղրուկներին:

Չբաւորներին կամեցան խաբել Սահմանադիր ժողովով և կրկին նստել բանւորների ու գիւղացիների վրին: Զանազան խորամանկութիւններով «ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ» ուզեցին յիմարացնել ժողովրդին, բայց չյաջողեցան:

Ռուս պրոլետարիատը և բանւորութիւնը հեռու գնաց բուրժուական խարէութիւնից և ասաց. «Այստեղ, ուր բուրժուաներն ու կալաճատէրերը, մենչեկիկներն ու էս-էրներն են նստած, աշխատաւոր մասսաների տեղը չէ: Մենք ուզում ենք ինքներս կառավարել՝ գիւղերի ու քաղաքների աշխատանքի խորհուրդների միջոցով»:

11. Առանձնայատուկ կենցաղ ու ազգային կազմ ունեցող շրջանների խորհուրդները կարող են շրջանային ու ինքնավար միութիւններ կազմել, որոնք ղեկավարոււմ են ինչպէս և ընդհանրապէս կազմաժ շրջանային միութիւնները—Սորհուրդների Շրջանային Համագումարների և նրանց գործադիր մարմինների կողմից:

Այս շրջանային ինքնավար միութիւնները Ֆեդերատիւ հիմքերով մտնում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Հանրապետութեան մէջ:

Ինքնուրոյն կերպով կառավարող ռուս բանւորներն ու գիւղացիները իրաւունք են տալիս իւրաքանչիւր շրջանին,—ենթադրենք, Թուրքեստանին, —իրենց ինքնուրոյն միութիւններն ունենալ: Եթէ այնտեղ աղագբնակութեան մեծագոյն մասը կազմում են կիրգիզները, սարթերը, բնական է, որ նրանց համար աւելի յարմար է իրենց շրջանը կառավարել ինքնուրոյն կերպով, սակայն առանց խզելու կապը Հանրապետութեան յետ:

Նրանք աւելի շուտ կը հասկանան իրար, կիմանան իրենց կարիքները և աւելի լաւ կը տնօրինեն իրենց կեանքը:

Եւ թող այդպէս լինի: Միայն արհրաժեշտ է, որ այդպիսի միութիւնը մտնի Սորհրդային մի յարկի տակ, մտնի Ռուսաստանի սոցիալիստական հանրապետութեան մէջ:

12. Ռուսաստանի Սոցիալիստական Սորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է Համառուսական Սորհուրդների Համագումարին, իսկ մէկ Համագումարից և մինչև միւսՀամագումարը եղած ժամանակաշրջանում—Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէին:

Ո՞ւմ էր պատկանում բարձրագոյն իշխանութիւնը անցեալ տարի մինչև փետրւարը: Թագաւորին, Ռասպուտինին և նրանց շրջապատող վոհմակիին:

Նրանք, ինչ որ ուզում էին անում էին ժողովրդի գլխին—միլիոններ էին նետում ուզած մարդուն:

Ո՞ւմ էր պատկանում իշխանութիւնը անցեալ տարի մինչև հոկտեմբեր: Սոշոր ու մանր հարուստներին:

Նրանք ղեկավարում էին միլիոնաւոր աշխատաւորներին, շարունակում էին ցարական քաղաքականութիւնը՝ «պատերազմ մինչև յաղթութիւն»։ Կառավարում էին ժողովուրդը ի նկատի ունենալով միայն մի խումբ հարուստների, սուսական, անգլիական և ֆրանսիական աւագակների ու յափշտակիչների շահերը:

Չանագան խոստումներով շարունակում էին խաբել գիւղացուն ու



բանւորին, իսկ իրենց գրպանները հաստացնում էին ու ժողովրդը մանկացնում:

Սոստացան հրաւիրել Սահմանադիր ժողով, որպէսզի օրինական ոյժ տան իրենց թալանին ու աւագակութեանը:

Այժմ բարձրագոյն իշխանութիւնն անցել է Բ. Չ. և Գիւղ. Պատգամաւորների Սորհուրդների Համագումարին: Այժմ միայն ինքը ժողովուրդը, միայն աշխատաւորները, հաւաքելով Ռուսաստանի զանազան ծայրերից, կարող են վճռել այն ամենը, որ առջ վճռում էր Ռասպուտինը, իսկ յետոյ Միլիւկովը ու Կերենսկին:

Միայն միլիոնաւոր աշխատաւորների շահերն արտայայտող և բանւորներից ու գիւղացիներից կազմաժ Սորհուրդների Համագումարը կորոշի ժողովրդի բախտը:

Սորհուրդների համագումարը կընտրի Կենտրոնական Գործադիր Կոմիտէ, որը մէկ Համագումարից մինչև միւս Համագումար հրաւիրելը կը վճռի Ռուսաստանի աշխատաւորների բոլոր կենսական խնդիրները:

Դա կը լինի ճշմարիտ—աշխատաւորական պարլամենտ, ընտրած մարդկանց մի ժողով:

13. Աշխատաւորների խղճի իսկական ազատութիւնը ապահովելու համար՝ եկեղեցին բաժանոււմ է պետութիւնից և դպրոցը—եկեղեցուց և կրօնական ու հակա-կրօնական ազատ պրոպագանդի իրաւունք է տրոււմ բոլոր քաղաքացիներին:

Հին-հին դարերից տէրտէրներն ու վարդապետները չքաւորներին, մանաւանդ գիւղի չքաւորներին յիմարացնում էին ամեն տեսակի սարսափներով, որ նոքա պիտի տեսնէին հանդերձեալ կեանքում: Վախեցնում էին զանազան սրբերով ու սրբուհիներով: Հազարաւոր տարիների ընթացքում մարդիկ խարխափում էին ստրկութեան ու տգիտութեան մէջ:

Փոքր հասակից երիխաններին սովորեցնում էին աղօթել Աստծուն: Եւ մեծանում էր խեղճը հաւատով ու երկիրդով լեցած աներևոյթ ոյժերի հանդէպ: Նա նրանց էր դիմում իր փորձաձեռքների ժամանակ. իսկ այդ փորձաձեռքները միշտ անպակաս էին գիւղացու համար: Աղան ուզածի պէս ձնշում էր նրան, աշխատեցնում էր, ծեծում էր, գինւորութեան էր ուղարկում, բռնաբարում էր կանանց ու աղջիկներին, իսկ նրա պաշտպան տէրակները խորհուրդ էր տալիս խեղճ-ջրատարին աւելի երկար աղօթել,—որովհետեւ «այն միւս աշխարհում քո գործերի հատուցումը կը ստանաս»: Չքաւորներին յիմարացնելու գործի մէջ հարուստների ամենալաւ գործակատարները տէրտէրներն էին:

Հարուստները ժողովրդական չքաւոր մասսաները խաբելու և յիմարացնելու համար մի փառայեղ կազմակերպութիւն են ստեղծել—այդ կազմակերպութիւնը կոչոււմ է եկեղեցի: Տէրտէրները օգտոււմ էին եկեղեցական բեմից նև-հարիւրակային քաղաքների համար և Աստծոյ սպասաւորները ծառայում էին ոչ թէ Աստծուն, այլ կալաճատէրերին ու վաշխառուներին և նրանց քարոզը միայն այս էր. «չունկոր, հպատակելի ունկորին»:

1003  
12484

Եկեղեցին ու տէրտէրները կարևոր էին բուրժուական իշխանութեան ցարի կառավարութիւնը, իսկ յետոյ էլ Կերենսկու, մեծամեծ գումարներ էր ծախսում եկեղեցիների և վանքերի վրայ. տէրտէրները ոտնիկ էին ստանում կառավարութիւնից և դարձեալ կողոպտում էին իրենց ծխականներին կենդանիի ու մեռածի համար:

Այժմ բանւորները ու գիւղացիները կառավարութիւնը տէրտէրների միաբանութեանը զրկել է կառավարական նպաստից: Եկեղեցին դառնում է մասնաւոր հիմնարկութիւն, իսկ հաւատը հաւատացեալ մարդկանց համար մի մասնաւոր գործ: Կառավարութիւնը իր գաղափարները քարոզելու համար եկեղեցու պէտք չունի,—գրա համար շատ հիմնարկութիւններ կան:

Հաւատացեալները եկեղեցին իրենց հաշուով պիտի պահեն:

Բուրժուական պետութեան մէջ դպրոցը գտնուում էր եկեղեցուն կից: Նիկոլայի կառավարութիւնն աշխատում էր ժողովուրդը պահել խաւարի ու տգիտութեան մէջ,—թագաւորին, կալաճատէրերին և վաշխառուներին ձեռնատու էր այդ: Տգէտ ժողովուրդը շատ պահանջկոտ չէ, նրան աւելի հեշտ է կողոպտել քան թէ գիտունին ու գրագէտին: Այդ պատճառով էլ մեր բուրժուա-դեկավարները աւելի շատ գիտնաւորներ էին պահում քան թէ զբարոցներ, իսկ այս վերջիններում էլ չքաւորների մատղաջ գլուխները յիմարացնում էին կրօնագիտութեամբ, Գիւղերում համարեայ ամեն տեղ միայն եկեղեցական-ծխական դպրոցներ կային, ուր գլխաւոր ուսուցիչը տիրացուն էր—հարեցող ու կաշառակեր: Գպրոցի շէնքը կառուցուում էր եկեղեցուն ու տէրտէրին մօտ:

Այժմ դպրոցը անկախ պիտի լինի եկեղեցուց, նա պէտք է աշխարհական լինի: Գրագիտութիւնը պէտք է լինի ընդհանուր և պարտագիր: Գիւղի չունեւորների և քաղաքի բանւորների երեխաները կարող են սովորել սոցիալիստական հանրապետութեան բոլոր դպրոցներում, և նոյնիսկ համալսարաններում, այն էլ առանց վճարի: Հարկաւոր չէ որեէ առանձին առաւելութիւններ ունենալ բարձրագոյն դպրոցները մտնելու համար:

14. Աշխատաւորների մտքերի ազատ արտայայտելը ապահովելու համար Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. մամուլը կապիտալից անկախ է յայտարարում և լրագրներ, բրոշիւրներ, գրքեր և տպագրական ուրիշ հրատարակութիւնների համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական ու նիւթական միջոցները տալիս է բանւոր դասակարգի ու չքաւոր գիւղացիութեան ձեռքը և ամբողջ երկրի մէջ նրանց տարածելը ապահովում է:

Ունեւորների տիրապետութեան շրջանում մամուլը, լրագրները, թերթերը, գրքերը—բոլորը նրանց ձեռքին էր գտնուում: Մամուլը մի ուժեղ գործիք էր ժողովրդական մասսաները հարստահարելու համար:

Բուրժուաների, կալաճատէրերի և վաշխառուների լրագրները կեղծում էին «ժողովրդի համար» և խաբում էին չքաւորներին: Գիւղացուն ու բանւորին կոպէկի փոխարէն բուրժուական թոյն էին մատուցանում:

Տէրտէրին ու եկեղեցական-ծխական դպրոցին օգնութեան էին գալիս կոպէկանոց գրքոյկներն ու թերթիկները և յիմարացնում էին գիւղացուն:

— Հզատակիր ունեւորներին, լսիր մեծերին, աղօթիր Աստծուն,— ահա թէ ինչ կարող էր կարգաւ գիւղացին կամ բանւորը այն գրքոյկները մէջ, նրան հրամայնում էին ունեւորներն ու վաշխառուները:

Այդ թոյնը ոչընչացնելու և բուրժուական թագաւորութիւնը վերջնականապէս աշխատաւորների շահերին հպատակեցնելու համար, որոշած է ընդմիջտ վերջ դնել բուրժուակական քարոզչութեան:

Բոլոր տեխնիկական միջոցները տրւում են աշխատաւորներին:

Բոլոր տպարանները, թուղթը և այլն պիտի տրամադրեն բանւորների ու գիւղացիների կարիքների համար:

Սոցիալիստական Ռուսաստանում ունեւորների խմբակի շահերը պաշտպանող մամուլ գոյութիւն ունենալ չի կարող:

Ամեն բան աշխատաւորների համար: Եւ ամենից առաջ այն, որ զարգացնում և աւելացնում է չքաւորների գիտակցութիւնը:

Գրքերը, լրագրները, թերթերը—բոլորը չքաւորների կարիքների համար, քաղաքի արւարձանների և գիւղերի լուսաւորութեան համար:

15. Աշխատաւորների ժողովների խսկական ազատութիւնը ապահովելու համար Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.-ը, ընդունելով խորհրդային Հանրապետութեան քաղաքացիների իրաւունքը ազատ կերպով ժողովներ, միտինգներ և թափօրներ կազմակերպել, բանւոր դասակարգի և գիւղական չունեւորների տրամադրութեան տակ է դնում ժողովրդական հաւաքոյթների յարմար շէնքերը՝ կարասիների լուսաւորութեան և վառելիքի հետ միասին:

Ցարի ժամանակ սոցիալիստները ժողովներ էին կազմակերպում անտառներում, ձորերում, հեռու ուտիկանութեան ու լրտեսների աչքերից, իսկ բուրժուաներն ու կալաճատէրերը ազատորէն հաւաքուում էին շքեղ դահլիճներում, «Ազնւականների ժողովարաններում» և ակումբներում:

Երբ անցեալ տարի փետրւարից յետոյ իշխանութիւնն անցաւ բուրժուա-գաւիղների ձեռքը, մի քիչ ազատութիւն եղաւ, բայց ամենից առաջ իրենց համար, իսկ յետոյ չքաւորների: Սրիկայ—Կերենսկիները վախենում էին մի անգամից խեղդել չքաւորներին. չքաւորներն իրենք էլ սկզբում տեղի չէին տալիս:

Բայց, հէնց որ բուրժուաները իրենց մէջ ոյժ զգացին, սկսեցին ճնշումները,—իսկական սոցիալիստ-կոմունիստների ժողովները չէին թոյլատրւում, ցրում էին:

Նոյն բանն էր կատարւում նաև բանւորների ու գիւղացիների թափօրների ժամանակ: «Կարգը պահպանելու պատրուակի տակ արգելւում էին ցոյցերը, յանուն հայրենիքի յեղափոխութեան փրկութեան՝ ցուցարարների հանդէպ գործ էին դնում խաբւած զինւորների ոյժը:

Գիւղերում վաշխառուները չքաւորներին շէնքեր չէին տալիս: Կալաճատիրական ագարակները զօրքերի համար կայան էին դարձնում:

Այդ ամենին այժմ վերջ է դրւած: Բոլոր պիտանի ու լաւագոյն, լուսաւոր ու տաք շէնքերը պիտի ծառայեն քաղաքների ու գիւղերի չքաւորների պէտքերի համար:

16 Աշխատաւորների միութիւնների իսկական ազատութիւնը ապահովելու համար, Ռ. Ս. Ս. Ֆ. Հ.-ը ոչընչացնելով ունևոր դասակարգերի տըն տեսական ու քաղաքական իշխանութիւնը և այդպիսով հեռացնելով այն բոլոր խոչընդոտները, որ մինչև այժմ բուրժուական հասարակութեան մէջ չէին թոյլ տալիս բանւորներին ու գիւղացիներին ազատ կերպով կազմակերպել ու գործել, այժմ ամեն տեսակ աշակցութիւն է ցոյց տալիս, թէ նիւթապէս և թէ այլ կերպ, որ նրանք համախմբեն ու կազմակերպեն:

Բանւորական արհեստակցական միութիւնները, ինչպէս նաև չքաւորների կոմիտէները այս նոր սոցիալիստական հասարակութեան մէջ պիտի ծառայեն բանւորների ու գիւղացիների հզօրութիւնը, կարգապահութիւնն ու գիտակցութիւնն բարձրացնելու համար:

Առաջ բանւորները կամ բոլորովին չէին կարող միութիւններ կազմել, կամ եթէ կարողանային էլ, քաղաքականութեամբ չը զբաղելու պայմանով միայն: Ոչ միայն բուրժուազիան, այլ և մենշեիկներն ու ալ էս-էրները յարձակուում էին միութիւնների վրայ, երբ վերջիններս խորհուրդների և այլ քաղաքական կազմակերպութիւնների կողմն էին լինում:

Այժմ խօսք անգամ չի կարող լինել այն մասին, թէ միութիւնները պարտաւոր են պաշտպանել որևէ ուղիներին,—այժմ խօսք պէտք է լինի այն մասին, թէ ինչպէս բոլոր բանւորական կազմակերպութիւնների գործունէութիւնը ի մի համախմբեն, որպէսզի սոցիալիստական տնտեսութիւնը աւելի լաւ հիմքերի վրայ կարելի լինի դնել:

Այն ամենը, որ արդելք էր հանդիսանում բանւորական կազմակերպութիւններին, պէտք է ոչնչանայ: Առաջ, կերենակու թագաւորութեան ժամանակ բանւորական արհեստակցական միութիւնները պատասպարելու տեղ անգամ չունէին: Պետրոգրադում բանւորական միութիւնները յայտարարական կարգով տեղաւորեցին նախկին ժանդարմական վարչութեան շէնքի մէջ,—բուրժուաների, մենշեիկների և ալ էս-էրների կառավարութիւնը մի քանի անգամ փորձեց նրանց այնտեղից դուրս քշել: Եւ միայն բանւորների վճռական բողոքներն ու սպառնալիքները ստիպեցին սրբկաններին լռել:

Այժմ օրէնքը լիակատար ազատութիւն է տալիս բանւորներին ու գիւղացիներին կազմակերպութիւնների և պարտք է դնում կառավարութեան վրայ օգնութեան գալ բանւորական միութիւններին և չքաւորների կոմիտէներին ամեն բանով՝ շէնքով, դրամով, անդամների ամեն աեսակի արտօնութիւններով և այլն:

Եւ այս բոլորը այն պատճառով, որ կազմակերպւած բանւորներն ու գիւղացիները աւելի հեշտ կը վճռեն այն խնդիրները, որ դրւած են խորհրդային Հանրապետութեան առջև:

17. Գիտութիւնը աշխատաւորներին իսկապէս մատչելի դարձնելու համար Ռ. Ս. Ս. Ֆ. Հ.-ը իրեն նպատակ է դրել բանւորներին և

չքաւոր գիւղացիութեանը տալ լիակատար ու բազմակողմանի ձրի կրթութիւն:

Իստանելով դպրոցները եկեղեցուց, տէրտէրներէից ու հարբեցող փրացուններից, բանւոր-գիւղացիական կառավարութիւնը որոշել է ապահովել բանւորների ու չքաւոր գիւղացիների մուտքը դէպի լայնածաւալ գիտութիւնը:

Փաբրիկաներն ու գործարանները դեկավարելու համար փորձւած տեխնիկներ, ինժեներներ և մեքենագործներ են հարկաւոր: Ո՞ւմ ձեռքին էին առաջ այդ պաշտօնները: Օտար ու չքաւորներին միանգամայն թշնամի տարրերի: Հոկտեմբերեան յեղափոխութեան ժամանակ նրանք սաբոտաժներէներ դարձան և բացարձակ կերպով խորհրդային իշխանութեան դէմ դուրս եկան:

Հողը աւելի լաւ մշակելու, գիւղը բարեկարգելու համար էլ ուսեալ մարդիկ են հարկաւոր՝ գիւղատնտեսներ, անտառաշէններ, ճարտարապետներ:

Ստորին դպրոցներում երեխայոց համար հարկաւոր են լաւ ուսուցիչներ:

Ո՞րտեղից ձեռք բերել դրանց: Ո՞վ աւելի յաջող ու ազնւօրէն գլուխ կը բերի մեր քաղաքային ու գիւղական տնտեսութեան կառուցման գործը, թէ ոչ իրենք բանւորներն ու գիւղացիները: Ո՞վ կը սովորեցին մանկան աշխատել ու սոցիալիստական հայրենիքը պաշտպանել, եթէ ոչ իրենք չքաւորները:

Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ բանւորներն ու գիւղացիները այդ բոլորը սովորեն, չքաւորների առաջ պէտք է բաց անել համալսարանների պոլիտեխնիկումների և ինժեներական դպրոցների դւնները:

Եւ կառավարութիւնն արդէն շատ բան է արել այդ ուղղութեամբ: Աշխանից արդէն բարձրագոյն դպրոցների մուտքն ազատ է: Ամեն մի չուսնւոր կարող է գնալ և սովորել ոչ միայն ար-բէն-ը, այլ և այն ամենը, որ առաջ միայն հարուստներն էին սովորում:

18. Ռ. Ս. Ս. Ֆ. Հ.-ը ընդունում է, որ իւրաքանչիւր քաղաքացու պարտականութիւնն է աշխատել և յայտարարում է «չաշխատողը չի ուտի» նշանաբանը:

Որքան շատ էին այդ սովորուկները: Նրանցից շատերը ապրում էին Արտասահմանում գեղխութեան ու անբարոյականութեան մէջ:

Իսկ այստեղ Ռուսաստանում նրանց հողերի վրայ ու Փաբրիկաներում միլիոնաւոր աշխատաւորներ ուժասպառ էին լինում չարաչար աշխատելուց: Իայց այդ ձրիակերների ու հացկատակների վերջը եկել է Հաց ունենենալու իրաւունք ունի միայն նա՝ ով աշխատում է:

Իսկ այն առողջ և ուժեղ մարդիկ, որոնք չեն ուզում աշխատել, ոչ միայն կը զրկեն իրենց բաժինից—այլ և նրանցից կը խլի այն ամենը, ինչ որ առաջուց են թալանել ու դիզել:

Միայն հարկաւոր է հսկողութիւն նշանակել բոլոր տղրուկների վրայ, որոնք վարժեւել ենուրիշի հաշւին ապրել:

19. Բանւորա-գիւղացիական յեղափոխութեան մեծ նւաճումներն ամեն կերպ պաշտպանելու համար Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.-ը Հանրապետութեան բոլոր քաղաքացիների պարտքն է համարում պաշտպանել սոցիալիստական հայրենիքը և այդ պատճառով հաստատում է ընդհանուր զինւորական ծառայութիւն: Յեղափոխութիւնը գէնքով պաշտպանելու՝ այդ պատւաւոր իրաւունքը նա տալիս է աշխատաւորներին, իսկ չաշխատող տարրերի վրայ ուրիշ զինւորական պարտաւորութիւններ են դրուում:

Ինչպէս փորձը ցոյց է տալիս, բանւորա-գիւղացիական հայրենիքը չի կարելի անպաշտպան թողնել: Նա ամեն կողմից շրջապատւած է գիշատիչների ու թալանչիների վոհմակներով:

Պէտք է միշտ պատրաստ լինել թշնամիներին հարւածելու համար այդպիսով մենք պաշտպանւած կը լինենք սոցիալիստական հանրապետութիւնը և հնարաւորութիւն կը տանք նրան աւելի զարգանալ ու ամրանալ: Գիւղերում համայնքներ (կոմմունա) են կազմակերպուում, քաղաքներում Ֆաբրիկաներն ու գործարանները անցնում են բանւոր դասի ձեռքը: Ինչ կը լինի, եթէ մենք չը գինւենք մինչև ատամները: Այն, որ մեզանից ամեն բան կը խլեն, ինչպէս այդ արին Ուկրայնայում, Սիբիրում, Իոնում:

Ուրեմն, առանց որևէ մէկի վրայ յոյս դնելու, առանց «քամի կուլ աալու» պէտք է մի հզօր և ուժեղ բանակ ստեղծել: Իրա համար բոլորը գէնք գործածել պիտի իմանան, որ հէնց ատաշին կոչին գնան պաշտպանելու իրենց հարստութիւնը՝ հողերը, Ֆաբրիկաները և Խորհրդային իշխանութիւնը: Բոլոր աշխատաւորները պարտաւոր են գէնք կրել:

Իւրաքանչիւր քաղաքում, իւրաքանչիւր գիւղում բանւորին ու գիւղացուն պիտի կանչեն զինւորական ծառայութեան, սակայն նրանց ընտանիքից առանց բաժանելու:

Բոլոր աշխատաւորները պէտք եղած վայրկեանին իրենց կուրծքը դէմ պիտի դնեն սոցիալիզմը պաշտպանելու համար:

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան գորքի մէջ մասնակցելը չունենորների պատւաւոր իրաւունքը պիտի համարւի: Չաշխատող տարրը—բուրժուաները, վաշխառուները, տէրտէրները և այլն իրաւունք չունեն գէնք կրելու: Նրանք կանչուում են միայն բանակին ծառայելու համար՝ խրամատներ փորելու, շէնքերը մաքրելու և թիկունքի աշխատանքները կատարելու:

Բանւորա-գիւղացիական կառավարութիւնը ուզած վայրկեանին հարուստներին կարող է կանչել սոցիալիստական բանակի հանդէպ նրանց ունեցած պարտաւորութիւնները կատարել տալու համար:

Սոյս տւողները կը պատժեն սոցիալիստական կառավարութեան արդար, բայց խիստ օրէնքներով:

20. Ընդունելով բոլոր ազգերի աշխատաւորներին համերաշխութեան տեսակէտը, Ռ. Ս. Խ. Ֆ. Հ.-ը Ռուսական Հանրապետութեան

հողի վրայ ապրող օտարերկրացիներին տալիս է Ռուսաստանի քաղաքացիներին համահաւասար քաղաքական իրաւունքներ, եթէ նրանք պատկանում են բանւոր դասակարգին և կամ ուրիշի աշխատանքը չը շահագործող գիւղացիութեան, այս նպատակով տեղական Խորհուրդներին հրահանգուում է առանց աւելորդ ձեւականութիւնների և զժւարութիւնների օտարերկրացիներին տալ ռուսական քաղաքացիական իրաւունք:

21. Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. ապաստան է տալիս բոլոր այն օտարերկրացիներներին, որոնք հետապնդուում են քաղաքական ու կրօնական յանցանքների համար:

Առաջ Ռուսաստանում արտօնութիւն էին վայելում զանազան օտարերկրացի սրիկայ—կապիտալիստներ, շահադէտներ (սպեկուլեանտ) և մոլեռանդ հակայեղափոխականներ: Բանւորներին ու գիւղացիներին այնքան էլ հեշտութեամբ չէին թողնում Ռուսաստան մտնել, որովհետև վախենում էին Արևմուտքի յեղափոխական վարակման թոյնից:

Իսկ ռուս բանւորներին ու գիւղացիներին ամբրիկական, Ֆրանսիական և գերմանական կապիտալիստները զրկաբաց էին ընդունում, որովհետև ռուս բանւորներն ու գիւղացիները աւելի սակաւապէտ ու տոկուն են, քան թէ նրանց արտասահմանեան եղբայրները:

Այժմ պատկերը բոլորովին փոխուած է: Եւրոպական ու ամբրիկական կապիտալիստները և հողատէրերը սոցիալիստական վարակումից երկիւղ կրելով, չեն թողնում ռուս բանւորներին ու գիւղացիներին մօտենալ իրենց դաշտերին ու Ֆաբրիկաներին: Նոյնիսկ իրենց գերիներին վախենում են ներս թողնել: Իսկ իրենք աւելի շուտ գժոխք կերթան, քան թէ սոցիալիստական Ռուսաստան:

Այժի Խորհրդային Ռուսաստանում լիակատար իրաւունք է տրուում ուրիշ երկրների աշխատաւորներին մտնելու ռուս քաղաքացիների շարքը, բայց միայն աշխատաւորներին,—տղրուկները մեզ մօտ տեղ չունեն, նոքա մեզ պէտք չեն, մեր ունեցածն էլ բաւական է:

Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութիւնը ապաստան է տալիս այն բոլոր բանւորներին, գիւղացիներին ու զինւորներին, որոնք հալածուում են իրենց կառավարութիւնների կողմից միայն նրա համար, որ ուզում են տապալել կապիտալիստների իշխանութիւնը, միայն նրա համար, որ պայքարում են յանուն սոցիալիզմի:

Այդպիսիները թող հրամմեն մեզ մօտ:

22. Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. ընդունելով բոլոր քաղաքացիների իրաւունքների հաւասարութիւնը, անկախ նրանց այս կամ այն ցեղին ու ազգին պատկանելուց, գտնում է Հանրապետութեան հիմնական օրէնքների տեսակէտով անթոյլատրելի ու հակասական որևէ արտօնութիւն կամ առաւելութիւն. նաև որևէ հալածանք ազգային փոքրամասնութիւնների վերաբերմամբ և նրանց իրաւունքների սահմանափակում:

23. Դեկավարելով բանւոր դասակարգի իբրև մի ամբողջութեան,

շահերի տեսակէտով, Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. ը զրկում է առանձին անհատներին և առանձին հոմբակներին այն իրաւունքներից, որ սոցիալիստական յեղափոխութեան շահերին ի վնաս են գործադրուում:

Ռուսաստանում բացի ուսանողներից ուրիշ ազգեր էլ են ապրում: առաջ, ցարի ժամանակ օտարազգիները, մանաւանդ հրէաները սառտիկ ճնշման ու հալածանքների էին ենթարկուում: Սակայն ոչ միայն հրէաները, այլ ուրիշ ժողովուրդներն էլ ուսումնասիրութիւններից բաւական տուժել են. տուժել են նաև կապիտալից: Մանաւանդ տուժել են աշխատաւորները: Ունեորը՝ թէկուզ և նա օտար ազգութեան ու ցեղի պատկանէր հեշտութեամբ էր կարողանում իր գործը տեսնել,—ուսում կապիտալիստներն ու կալաւածատէրերը նրանց իրենց եղբայրներն էին համարում: Իսկ բանւորները, արհեստաւորները ենթարկուում էին հալածանքի, ստոր զրպարտութեան ու անարգանքի:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան մէջ դոյութիւն պիտի չունենայ առանձին ազգերի ճնշում ու հալածանք, թէկուզ նրանք մեղանից աւելի պակաս լինեն թուով: Ոչ ոք որևէ առաւելութիւն պիտի չունենայ:

Սակայն բանւոր-գիւղացիական կառավարութիւնը կարող է առանձին անհատների ու խմբակների, ինչ ազգի էլ նրանք պատկանելիս լինեն, զբրկել իրաւունքներից ու արածուութիւններից, եթէ նրանք ի չարն են գործ դնում այդ իրաւունքները:

Բուրժուան, հակա-յեղափոխականը—ով ուզում է նա լինի,—հրէայ, լեհացի,—եթէ բանւորների մեծամասնութեան դէմ է դուրս գալիս, այլևս նրան փրկութիւն չկայ:

### ԲՆԵՒՈՐՆԵՐԻ, ԳԻՒՂԱՅԻՆԵՐԻ, ԿՈՋԱԿՆԵՐԻ ԵՒ ԿՍՐՄԻՐ ԶԻՆԻՈՐՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՀՄԱՌՈՒՄԱԿԱՆ ՀՄԱՐԳՈՒՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

24. Խորհուրդների Համառուսական Համագումարը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնն է կազմում:

25. Խորհուրդների Համառուսական Համագումարը կազմած է քաղաքային Խորհուրդների ներկայացուցիչներից, 25,000 ընտրողներին 1 պատգամաւորի հաշուով, և Խորհուրդների նահանգական համագումարների ներկայացուցիչներից, 125,000 բնակչին 1 պատգամաւոր հաշւած:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 1. Այս դէպքում, երբ Խորհուրդների նահանգական Համագումարը նախընթեր է Համառուսական Համագումարին, վերջինիս համար պատգամաւորներ ուղարկուում են անմիջական կերպով զաւառական Համագումարների կողմից:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 2. Այն դէպքում, երբ Խորհուրդների Շըր-

ջանային Համագումարը նախընթեր է Համառուսական Համագումարին, վերջինի համար պատգամաւորներ կարող են ուղարկել Շըջանային Համագումարի կողմից:

26. Խորհուրդների Համառուսական Համագումարը հրաւիրում է Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից մի տարւայ մէջ ոչ պակաս քան երկու անգամ:

Մեր երկրում բարձրագոյն իշխանութիւնը կը ներկայացնի այժմ Խորհուրդների Համառուսական Համագումարը:

Իսկ ինչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, որ մի բուն բուրժուաներն ու սպրուկները չեն, որ պիտի կառավարեն բազմամիլիոն ժողովուրդը, այլ ինքը ժողովուրդը, բանւորներն ու գիւղացիները:

Խորհուրդների համագումարը—զա աշխատանքի պարլամենտ է, ընտրւած մարդկանց մի ժողով: Ամեն մի աշխատաւոր իրաւունք ունի Համագումարի համար ներկայացուցիչներ ընտրել: Չէ որ Խորհուրդների Համագումարում պիտի վճուեն ամբողջ երկրին վերաբերող գլխաւոր գործերը: Իրա համար էլ այնտեղ պէտք է ուղարկել տեղական ամենալաւ ներկայացուցիչներին, բայց ուղարկելիս չպէտք է մոռանալ, որ առանց առաջնորդ-նորդների մնալ էլ չի կարելի:

Ամեն մի ընտրող, որ գիտակցաբար է ընտրում իր ներկայացուցիչներին, պիտի գիտենայ, թէ ինչպէս է կազմուում Խորհուրդների Համագումարը, և ինչ ձևով պատգամաւորներ պէտք է ընտրել նրա համար:

Ընտրութիւններն այնպէս են կատարուում: Ենթադրենք Սարատովի քաղաքային Խորհուրդը, որ կազմած է քաղաքի աշխատաւոր խաւերից, ուրն 200 մարդ՝ 300,000 ընտրողների ղողմից. Համառուսական Համագումարի համար նա ուղարկում է 12 պատգամաւոր, 25,000 ընտրողներին 1 պատգամաւոր հաշւելով:

Բայց բացի քաղաքի ներկայացուցիչներից, Համագումարին պիտի մասնակցեն նաև գիւղացիները, նահանգի բոլոր աշխատաւորները: Իրա համար այժմ գումարող Համառուսական Համագումարից առաջ, նախօրօք որոշւած ժամանակ (6-րդ Համագումարը—Յունւար 10 1919 թ.) ամեն մի նահանգում պէտք է նահանգական Համագումար հրաւիրել և այնտեղ ընտրել ներկայացուցիչներ Համառուսական Համագումարի համար: Եթէ նահանգական Համագումարը 500 հազար բնակիչ է ներկայացնում, հարկաւոր է չորս պատգամաւոր ուղարկել, 125 հազար բնակչին 1 պատգամաւոր հաշւելով:

27. Արտակարգ Համառուսական Համագումարը հրաւիրում է Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից իր հայեցողութեամբ և կամ տեղական Խորհուրդների պահանջով, եթէ այդ տեղերի ազգաբնակչութիւնը Հանրապետութեան բնակչութեան  $\frac{1}{2}$  է կազմում:

28. Խորհուրդների Համառուսական Համագումարն ընտրում է Հ. Կ. Գ. Կ. բաղկացած 200 հոգուց ոչ աւելի:

29. Համառուսական Կ. Գ. Կ. ամբողջովին պատասխանատու է Խորհուրդների Համառուսական համագումարի առջև:

30. Մէկ Համագումարից մինչև միւս Համագումարը եղած ժամանակամիջոցում Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն ներկայացնում է Հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնը:

Խորհուրդների Համառուսական և բթական Համագումարը 6 ամիսը մի անգամ է հրաւիրւում.—այսպէս, 5-րդ Համագումարը յուլիսի 10-ին էր, 6-րդը կը հրաւիրուի Յունուարի 10-ին: Բայց այս հերթական համագումարներին միջանկեալ, կարող են արտակարգ համագումարներ հրաւիրւել:

Այդ տեսակ համագումարներ հրաւիրելու առիթ կարող են լինել բացառիկ դէպքերը, որպէսզի ամբողջ ժողովուրդը իր ընտրեալների միջոցով ասի իր շուտափոյթ ու վճռական խօսքը:

Արտակարգ 4-րդ համագումարը հրաւիրւած էր Բրեստի հաշտութեան պայմանագրի առթիւ, երբ հարկաւոր էր վճռել ընդունել, թէ ոչ հաշտութեան ծանր պայմանները:

Խորհուրդների Համառուսական Համագումարները հրաւիրւում են Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից, որ ընտրւում է Համառուսական Խորհրդային Ռուսաստանի 200 լաւագոյն մարդկանցից: Մէկ Համագումարից մինչև միւս Համագումարը, վեց ամիս ամբողջ աշխատանքը կատարում է Հ. Կ. Գ. Կ., ղեկավարելով Համագումարի սրբունկերով և պատասխանատու լինելով նրա առջև:

### ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԷԻ ԱՄՍԻՆ

31. Հ. Կ. Գ. Կ. ներկայացնում է Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-եան բարձրագոյն օրէնսդիր, կարգադիր և վերաստուգիչ մարմինը:

32. Հ. Կ. Գ. Կ. ընդհանուր ուղղութիւն է տալիս բանտրագիւղացիական կառավարութեան բոլոր մարմինների գործունէութեան, միացնում ու ներդաշնակում է օրէնսդրական ու կառավարչական աշխատանքները և հետևում է, որ կեանքի մէջ կիրաւեն Խորհրդային սահմանադրութիւնը, Խորհուրդների Համառուսական Համագումարների և Խորհրդային իշխանութեան կենտրոնական մարմինների որոշումները:

33. Հ. Կ. Գ. Կ. քննում ու հաստատում է ղեկրեանների նախագծեր և այլ առաջարկութիւններ, որ գալիս են ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի և կամ առանձին վարչութիւնների կողմից և հրատարակում է իր սեփական ղեկրեաններն ու կարգադրութիւնները:

34. Հ. Կ. Գ. Կ. հրաւիրւում է Խորհուրդների Համառուսական

Համագումար, որին ներկայացնում է իր գործունէութեան հաշիւը և ղեկուցում է տալիս ընդհանուր քաղաքականութեան և առանձին հարցերի մասին:

35. Հ. Կ. Գ. Կ. կազմում է ժողովրդական Կոմիտեաների Խորհուրդ՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. գործերի ընդհանուր վարչութեան համար և բաժանմունքներ (ժողովրդական Կոմիտեաներ) վարչութեան առանձին ճիւղերի ղեկավարութեան համար:

36. Հ. Կ. Գ. Կ. անդամները աշխատում են բաժանմունքներում (ժողովրդական կոմիտեաներում), կամ կատարում են Հ. Կ. Գ. Կ. յատուկ յանձնարարութիւնները:

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն հրատարակում է օրէնքներ, կարգադրութիւններ, և հետևում է, որ Խորհրդային հիմնարկութիւնների գործերը անոնաւոր տարւեն:

Կ. Գ. Կ. որպէս Հանրապետութեան բարձրագոյն մարմին, ուղղութիւն է տալիս Կառավարութեան գործունէութեան և հետևում է, որ Կենտրոնական Կառավարութեան և առանձին Կոմիտեաների աշխատանքները ներդաշնակ լինեն Համառուսական Խորհուրդների և Խորհրդային սահմանադրութեան որոշումներին հետ:

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն կարող է ժողովրդական կոմիտեաներ նշանակել, որոնք և վարում են Հանրապետութեան գործերը:

Գործադիր Կոմիտէն հողում է նաև համագումար հրաւիրելու մասին՝ համագումարի համար օրակարգ է մշակում և այլն:

Հ. Կ. Գ. Կ. բոլոր անդամները այս կամ այն պարտականութիւն են կատարում՝ աշխատում են բաժանմունքներում և կամ այս կամ այն կողմն գնում Հ. Կ. Գ. Կ. յատուկ ձեռնարկութիւններով:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

37. Ժողովրդական Կոմիտեաների Խորհրդին է պատկանում Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-եան գործերի ընդհանուր կառավարութիւնը:

38. Այս նպատակն իրագործելու համար, ժող. Կ. Խոր. ղեկրեաններ, կարգադրութիւններ, հրահանգներ է հրատարակում և առհասարակ միջոցներ է ձեռք առնում, որ անհրաժեշտ են պետական կեանքի ուղիղ և արագ ընթացքի համար:

39. Իր բոլոր կարգադրութիւններին և վճիռների մասին ժող. Կոմ. Խորհուրդն անմիջապէս հաղորդում է Հ. Կ. Գ. Կ.-ին:

40. Հ. Կ. Գ. Կ. իրաւունք ունի փոխել կամ արգելել ժող. Կոմ. Խորհրդի կարգադրութիւններն ու վճիռները:

41. Ժող. Կոմ. Խորհրդի բոլոր կարգադրութիւններն ու որոշումները, որ հասարակական մեծ նշանակութիւն ունեն, յանձնւում են Հ. Կ. Գ. Կ. քննութեան ու հաստատման:

Մանօրուքիւն. Անյապող գործադրութիւն պահանջող միջոցները կարող են անմիջական կերպով գործադրել ժող. Կոմ. Խորհրդի կողմից:

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կառավարում է երկիրը և նպաստում է պետական կեանքի կանոնաւոր ընթացքին: Ժողովրդական Կոմիսարները՝ մեր սոցիալիստական նաւի ղեկն են կազմում:

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է ընտրւած մարդկանց՝ Հ. Կ. Գ. Կ.-ի առջև: Առաջ նախարարները (մինիստրները) պատասխանատու չէին ժողովրդի առջև, ընտ կեանքն այնպէս էին տնօրինում, ինչպէս հարուստների շահն էր պահանջում:

Այժմ ժող. Կոմ. Խորհուրդը պարտաւոր է իր որոշումների մասին զե կուցել Հ. Կ. Գ. Կ.-ին. բոլոր կարևոր գործերը հաստատուած են Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կողմից:

42. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամներն առանձին ժողովրդական կոմիսարիատների գլուխն են կանգնած:

43. Ժողովրդական կոմիսարիատները թւով 17 են, այն է.

- ա) Արտաքին գործերի, բ) զինւորական գործերի, գ) ծովային գործոց, դ) ներքին գործոց, ե) արդարագատութեան, զ) աշխատանքի, է) հասարակական ապահովութեան, ը) ժողովրդական կրթութեան, թ) պոստ և հեռագրի, ժ) աղագային գործերի, ի) ելեմտական, լ) ճանապարհների հաղորդակցութեան, խ) երկրագործական, �ծ) առևտրական-արդիւնաբերական, կ) ժողովրդական պարենաւորման, հ) պետական վերահսկողութեան, ճ) Ժողովրդական Տնտեսութեան Բարձրագոյն Խորհուրդ, զ) առողջապահական:

44. Իւրաքանչիւր ժողովրդական կոմիսար կոլեգիա է կազմում իր նախագահութեան տակ, որիա նախնները հաստատուում են ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

45. Ժողովրդական Կոմիսարն իրաւունք ունի իր հայեցողութեամբ վճռել այն բոլոր խնդիրները, որ համապատասխան կոմիսարիատի իրաւասութեան են ենթարկուում, այդ մասին հաղորդելով ի գիտութիւն կոլեգիայի: Այն պարագային, երբ կոլեգիան համաձայն չէ ժողովրդական Կոմիսարի հետ, նա առանց արգելք հանդիսանալու այդ վճռի իրագործման, կարող է բողոք ներկայացնել ժողովրդական Կոմիսարների Խորհրդին և կամ Հ. Կ. Գ. Կ. Նախագահութեան:

46. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ամբողջութեամբ պատասխանատու է Խորհուրդների Համառուսական Խորհրդի և Հ. Կ. Գ. Կ. առջև:

47. Ժողովրդական Կոմիսարները ժողովրդական Կոմիսարիատին կից գտնուող կոլեգիաներն ամբողջովին պատասխանատու են ժող. Կոմ. Խորհրդի և Հ. Կ. Գ. Կ. առջև:

48. Ժողովրդական Կոմիսար կոչումը պատկանում է բացառապէս

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամներին, նա է վարում Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. ընդհանուր կենտրոնական ու տեղական Խորհրդային Իշխանութեան և սչ մի ներկայացուցիչ իրաւունք չունի այն իւրացնել: Ժողովրդական Կոմիսարները կառավարում են կոմիսարիատները: Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսարը վարում է Խորհրդային Ռուսաստանի փոխարարբերութիւնները միւս պետութիւնների հետ: Զինւորական գործոց ժողովրդական Կոմիսարը վարում է զինւորական ցամաքային ոյժերը, ղեկավարում է կարմիր զօրքը:

Ներկայ անցողական շրջանում այդ կոմիսարիատները առաջնակարգ նշանակութիւն ունեն: Մեր Հանրապետութիւնը շրջապատող օտարերկրացի դիշատիչների օղակը, օտարերկրացի զօրքերի ճնշումը՝ զինւորական ու արտաքին գործոց Կոմիսարներից ոյժերի մեծ լարում են պահանջում, որ կարելի լինի պաշտպանել ապագայ յափշտակութիւններից:

Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարը վարում է երկրի ամբողջ ներքին քաղաքականութիւնը, տեղական բոլոր խորհուրդները: Արդարագատութեանը—վարում է բոլոր դատարանները: Հասարակական ապահովութեանը—ղեկավարում է աշխատա չընների խեղանդամ և հիւանդ լինելու պարագային օգնութիւն հասցնելու գործը, ծանապարհների Հաղորդակցութեանը—վարում է երկաթուղիները, Պետական վերահսկողութեան—ստուգում է և հետևում, որ ստացւած եկամուտները և տեղի ունեցող ծախքերը լինեն կանոնաւոր և օրինաւոր: Առողջապահութեանը—հոգ է տանում բանւորների ու զիւղացիների կեանքի ու առողջութեան մասին:

Այդ 17 առանձին Կոմիսարիատները մէջ է գտնուում Ժողովրդական Տնտեսութեան Բարձրագոյն Խորհուրդը: Այստեղ է կենտրոնացած մեր տնտեսութեան վերաբերեալ բոլոր գործերը:

Ժողովրդական կոմիսարիատները ինքնագլուխ չեն կառավարում, այլ կազմում են կոլեգիաներ, այսինքն պատասխանատու գործիչների ժողով: որ հաստատուում է ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից: Այդպիսի կոլեգիան բաղկացած է լինում ընդհանրապէս 5—7 հոգուց:

Թէև Ժողովրդական Կոմիսարը կարող է ինքնագլուխ վճռել որևէ հարց, սակայն կոլեգիան կարող է բողոքել այդ վճռի դէմ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդում, եթէ նա ամբողջութեամբ և կամ առանձին անդամները համաձայն չեն ժողովրդական Կոմիսարի վճռի հետ:

**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԷԻ ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

49. Խորհուրդների Համառուսական Համագումարի և Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի իրաւասութեան են ենթարկուում ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող բոլոր խնդիրները, այն է.

ա) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. սահմանադրութեան հաստատումը, փոփոխումը և լրացումը:

բ) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. ներքին ու արտաքին ամբողջ քաղաքականութեան ղեկավարումը:

գ) Սահմանների հաստատումն ու փոփոխությունը, նոյնպէս Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. հողամասերի և կամ նրան պատկանած իրաւունքների վաճառումը:

դ) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. կազմի մէջ մտնող շրջանային Սորհրդային միութիւնների սահմանների և իրաւասութիւնների որոշումը ինչպէս նաև նրանց մէջ տեղի ունեցող վէճերը մաքրելը:

ե) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. կազմի մէջ Սորհրդային Հանրապետութեան նոր անդամակից ընդունելը և Ռուսական Ֆեդերացիայից նրա առանձին մասերի անջատումը ճանաչելը:

զ) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. երկրամասի ընդհանուր վարչական բաժանումը և շրջանային համախմբումների վաւերացումը:

է) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. երկրամասում գոյութիւն ունեցող չափի, քաշի և փողերի յօրինակարգի (սիստեմի) հաստատումն ու փոփոխումը:

ը) Բանակցութիւններ օտար պետութիւնների հետ, պատերազմի յայտարարումն և խաղաղութիւն կնքելը:

թ) Փոխառութիւնների, մաքսային և առևտրական պայմանագրերի կնքումը և ֆինանսական համաձայնութիւններ կապելը:

ժ) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. երկրամասի վրայ դաժնուող ամբողջ ժողովրդական տնտեսութեան և նրա առանձին ճիւղերի՝ հիմքերի և ծրագրի կազմելը:

ի) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. ելեմտացոյցի (բիւջէ) հաստատումը:

լ) Համագետական հարկերի ու աուրքերի սահմանումը:

խ) Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. զինւորական ոյժերի կազմակերպութիւնների հիմքերի որոշում:

ծ) Համապետական օրէնսդրութիւն, դատավարական կազմ և դատավարութիւն, քաղաքացիական ու քրէական օրէնսդրութիւն և այլն:

կ) Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի առանձին անդամների և Ժ. Կ. Ս. ամբողջ կազմի պաշտօնի կոչելն ու հեռացնելը, նոյնպէս Ժ. Կ. Ս. նախագահի հաստատելը:

հ) Հանրապետութեան մէջ ապրող ռուս քաղաքացիների և օտարերկրացիների իրաւունքներ ձեռք բերելու և կորցնելու մասին ընդհանուր որոշումների հրատարակումը:

ձ) Ընդհանուր ու մասնակի ներման իրաւունքը:

50. Բացի վերայիշեալ խնդիրները, Համառուսական Սորհուրդների համագումարի և Համառուսական Կ. Գ. Կ. իրաւասութեան տակ են գտնուում նաև այն խնդիրների լուծումը, որ նրանք ընդունում են, որպէս իրենց իրաւասութեան ենթարկուող խնդիրներ:

51. Բացառապէս Համառուսական Սորհուրդների Համագումարի իրաւասութեան է պատկանում.

ա) Սորհրդային սահմանադրութեան հիմնական սկզբունքների որոշումը, փոփոխութիւնը և լրացումը:

բ) Սաղաղութեան պայմանագրերի վաւերացումը (ратификация)

52. Գ. կէտի և յօդ. 1-ի մէջ դրւած խնդիրների որոշումը թոյլատրուում է Համառուսական Կ. Գ. Կ. միայն այն դէպքում. երբ Համառուսական Սորհուրդների համագումար հրաւիրել հնարաւորութիւն չկայ:

Համառուսական Համագումարը և Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն վճռում են Հանրապետութեան բոլոր գլխաւոր հարցերը: Համագումարը կարող է փոփոխել ու լրացնել արդէն գոյութիւն ունեցող հիմնական օրէնքը: Ղեկավարում է մեր ներքին բոլոր գործերը և մեր յարաբերութիւնները ուրիշ երկրների հետ: Սորհուրդների Համագումարը և Կ. Գ. Կ. նոյնպէս որոշում են ամբողջ Փուտաստանի Հանրապետութեան և առանձին շրջանների սահմանները:

Ո՛վ կարող է պատերազմ յայտարարել և խաղաղութիւն կնքել: Միայն Սորհուրդների համագումարը, միայն աշխատաւորական Փուտաստանի ընտրուած մարդիկ իրաւունք ունեն միլիտանտութեան բանակների ու զինուորացիների բախտը վճռել: 1914 թիւն պատերազմ յայտարարեց թագաւորը և նրան շրջապատող մի խումբ բիւրոկրատներ Բասպուտինը և անառակների վոնձակը: Իսկ այս արեւնալի սպանդանոցից ժողովուրդը ինքը դուրս եկաւ, — Սորհուրդների 4-րդ Համագումարը միլիտանտութեան աշխատաւորների կամքի համաձայն հաշտութիւն կնքեց: Եւ ապագայում էլ միայն Համառուսական համագումարը կարող է խաղաղութիւն կնքել կամ պատերազմ յայտարարել:

Սորհուրդների Համառուսակտն Համագումարի և Կ. Գ. Կ. իրաւունք է ժողովրդական ամբողջ տնտեսութեան ծրագիրը մշակել, մուտք ու ելքի ցուցակը կազմել (պետական գանձարանի), հարկեր ու զանազան տուրքեր նշանակել, դատարանների գործը վարել և այլն:

### ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Սորհուրդների Համագումարները հետեւեալ ձևով են կազմուած.  
ա) Շրջանային Համագումարները — քաղաքային ու գաւառական համագումարների ներկայացուցիչներից, 25 հազար բնակիչներին 1 պատգամաւոր հաշուով, իսկ քաղաքներից 1 պատգամաւոր՝ 5 հազար ընտրողների կողմից, բայց ամբողջ շրջանից ոչ աւելի քան 500 պատ-

գամաւոր. կամ համագումարների ներկայացուցիչներից, միևնոյն կանոնով ընտրւած, եթէ այդ համագումարը հրաւիրուում է շրջանային համագումարից առաջ:

բ) Նահանգական (ОВРУЖЕНЕ)—քաղաքային և փրճակային համագումարների ներկայացուցիչներից, 10 հազար բնակչին 1 պատգամաւոր, իսկ քաղաքներից 2 հազար ընտրողներից 1 պատգամաւոր, բայց ամբողջ նահանգից ոչ աւելի քան 300 պատգամաւոր, բայց եթէ Խորհուրդների գաւառական համագումարը հրաւիրուում է նահանգաւորներից առաջ, այդ դէպքում ընտրութիւնները նոյն կանոններով կատարուում են ոչ թէ վիճակային, այլ գաւառային համագումարի կողմից:

գ) Գաւառական (ռայոնական)—վիճակի գիւղական խորհուրդների ներկայացուցիչներից, խորհուրդի իւրաքանչիւր 10 անդամին մի պատգամաւոր:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ 1. Գաւառական Համագումարներին մասնակցում են այն քաղաքների խորհուրդներ, որոնց բնակիչները 10 հազարից աւելի չեն: Այն վայրերի գիւղական խորհուրդները, որոնց բնակիչների թիւը 10 պակաս է, գաւառական Համագումարի պատգամաւոր ընտրելու համար միանում են:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ 2. Այն գիւղական խորհուրդները, որոնց անդամների թիւը 10-ից պակաս է, վիճակային համագումարին 1 պատգամաւոր են ուղարկում:

Տեղական Խորհուրդային իշխանութեան կազմակերպութիւնը մինչև վերջին ժամանակներս խայտարակետ էր և սխալ: Մի տեղում ամբողջ իշխանութիւնը փաստօրէն գտնուում էր վաղուց արդէն վերացւած Զինուորային փոխական Կոմիտէի ձեռքին, մի ուրիշ տեղում նա գտնուում էր աշխատաւոր ու ոչ աշխատաւոր ամբողջ ժողովրդի կողմից ընտրւած անկուսակցական Խորհուրդների ձեռքին: Եւ այս բոլորը այն պատճառով, որ չի եղել մի դեկավարող սկզբունք, ամբողջ երկրի համար չի եղել հիմնական օրէնք, որի հետեանքով շատ յաճախ տեղական զանազան Խորհուրդային կազմակերպութիւնների մէջ անհամաձայնութիւններ էին տեղի ունենում:

Ներկայ հիմնական օրէնքը ճշտութեամբ որոշում է տեղերի Խորհուրդացիին իշխանութեան սկզբունքները:

Ի՞նչպէս է կազմուում իշխանութիւնը սկսած փոքր գիւղերից մինչև մայրաքաղաքները:

Սկսենք գիւղերից: Պոլիկարպովկա գիւղը ընդամենը 1120 բնակիչ ունի, նրանցից՝ 72 փոքրահասակները, 14 վաշխառուներ, որ ուրիշի աշխատանքից են օգտուում, 5 խանութպաններ, եկեղեցական պաշտօնեաներ, 7 հոգի, այնտեղ մնում լիազօր իրաւունքներ ունեցող 1020 քաղաքացիներ որոնք և ընտրում են գիւղական Խորհուրդը, իւրաքանչիւր 100 բնակիչի՝ 1 պատգամաւոր, իսկ գիւղն ունի 1120 բնակիչ, — ուրեմն 11 պատգամաւորները կազմում են գիւղական Խորհուրդը:

Եթէ վիճակում 15 գիւղ կայ, այդ դէպքում 15 գիւղական Խորհուրդները միանում են ու կազմում վիճակային Համագումար, Խորհուրդի 10 անդամին 1 պատգամաւոր հաշւելով: Վիճակային Համագումարը 10 հոգուց բաղկացած Գործադիր Կոմիտէ են ընտրում, որը և վարում է վիճակի բոլոր գործերը:

Գիւղական Խորհուրդները կազմում են նաև գաւառական իշխանութիւն, իրենց ներկայացուցիչներն ընտրելով Գաւառական Համագումարի համար, այնպէս որ ամեն մի օր հազար բնակչի մի պատգամաւոր է գալիս:

Գաւառական Համագումարներին մասնակցում են նաև 10 հազար բնակիչ ունեցող քաղաքները: Գաւառական Համագումարում ընտրում է նաև Գործադիր Կոմիտէ, ամբողջ գաւառի աշխատանքները ղեկավարելու համար:

Յետոյ գալիս է նահանգներում Խորհուրդային իշխանութիւն կազմակերպելու հարցը: Նահանգային Համագումարը հրաւիրում է քաղաքային Խորհուրդների և վիճակային Համագումարի ներկայացուցիչներից, բ կէտի կանոնի համաձայն: Նահանգական Համագումարը, գաւառական և վիճակային համագումարների նման, ընտրում է իր նահանգական Գործադիր Կոմիտէն, Նահանգական Գործադիր Կոմիտէի պարտականութիւնն է նահանգի բոլոր գործերի ղեկավարել՝ կազմել նահանգի ելեմուտը, բարձրացնել տնտեսութիւնը, զարգացնել այն ճիւղերը, որ տեղոյն համար աւելի արժէք ունեն և վերջապէս կեանքի մէջ կիրառնել Կենտրոնական Իշխանութեան որոշումները:

Յետոյ գալիս է շրջանային համագումարների կազմակերպելու խնդիրը: Բնական ու տնտեսական պայմանների տեսակէտից Ռուսաստանը բաժանուում է հետեւեալ շրջաններին: Մոսկովեան արդիւնաբերական, Հիւսիսային, Ուրալեան և այլն: Երջանը մի քանի նահանգներից է բաղկացած: Այս նահանգները կապւած են իրար հետ ընդհանուր տնտեսական շահերով՝ տնտեսութեան կազմակերպութեամբ, բնական հարստութիւնների շահագործմամբ և այլն:

Երջանը կառավարելու համար Երջանային Համագումար է հրաւիրում: Երջանային Համագումարի պատգամաւորները կարող են ուղարկել նահանգական համագումարների կողմից, եթէ այս համագումարները տեղի են ունենում շրջանային համագումարների նախօրեակին, և կամ գաւառական համագումարների ու քաղաքային Խորհուրդների կողմից ա. հատուածի մէջ ցոյց տրւած թւի համաձայն:

54. Խորհուրդների Համագումարները հրաւիրում են Խորհուրդային իշխանութեան երկրամասերի համապատասխան գործադիր մտրմիների կողմից Գործադիր Կոմիտէների) վերջիններս հայեցողութեամբ և կամ այն վայրերի Խորհուրդների պահանջով, որոնց թիւը ներկայ շրջանի 1/3 է կազմում: Յամենայն դէպս շրջաններում տարին երկու անգամ ոչ պակաս, նահանգներում և գաւառներում առնուազը երեք ամիսը մէկ անգամ և վիճակներում ամիսը առնուազն մէկ անգամ:

55 Խորհուրդները Համագումարը (ըրջանային, նահանգական, գաւառական, վիճակային) ընտրում է իր գործադիր մարմինը—Գործադիր Կոմիտէն, որի անդամները թիւը պիտի լինի ոչ աւել քան՝ ա) ըրջանում և նահանգում—25, բ) գաւառում—20, ց) վիճակում—10. Գործադիր Կոմիտէն ամբողջութեամբ պատասխանատու է իրեն ընտրող Խորհուրդների Համագումարի առջև:

56. Իր իրաւասութեան սահմանների մէջ Խորհուրդների Համագումարը (ըրջանային, նահանգական, գաւառական, վիճակային) ներկայ երկրամասի սահմաններում միակ իշխանութիւնն է կազմում. իսկ երկու համագումարների մէջ եղած ժամանակաշրջանում Գործադիր Կոմիտէին է պատկանում այդ իշխանութիւնը:

Խորհուրդների համագումարը սովորաբար հրաւիրւում է Գործադիր Կոմիտէի կողմից, բայց ոչ թէ քաղաքային, այլ նահանգական, գաւառական և կամ վիճակային, նայելով թէ ինչ համագումար է հրաւիրւում: Բացառիկ պարագաներում համագումար կարող է հրաւիրւել Խորհուրդների պահանջելով, եթէ նոյն ըրջանի նահանգի գաւառի կամ վիճակի ազգաբնակչութեան մէկ մասն են ներկայացնում, այսինքն եթէ նահանգում 300,000 բնակիչ կայ, այն ժամանակ 100,000 բնակիչ ներկայացնող Խորհուրդների պահանջով Համագումար պէտք է հրաւիրւի:

Համագումարներ պէտք է հրաւիրեն՝ ըրջաններում—տարւայ մէջ երկու անգամից ոչ պակաս, նահանգներում և գաւառներում—երեք ամիսը մի անգամ, իսկ վիճակներում—ամիսը մի անգամ: Այդ անհրաժեշտ է այն պատճառով, որ աւելի յաճախ կարելի լինի ընդհանուր ձեռքբերով զձուել տեղական կեանքի գլխաւոր խնդիրները և բացի այդ հնար ունենալ Գործադիր Կոմիտէ վերընտրելու:

Ոչ միայն քաղաքային Խորհուրդներն են իրենց Գործադիր Կոմիտէն ընտրում, այլ և նահանգներում, գաւառներում և վիճակներում Խորհուրդների Համագումարները իրենց Գործադիր Կոմիտէներն են ընտրում, բոլոր տեղերում Խորհրդային աշխատանքը ղեկավարելու համար: Այդպիսի Գործադիր Կոմիտէն, որ ընտրւում է հատուած 55-ի մէջ ցոյց տրւած թւի համեմատ, երկու համագումարների մէջ եղած ժամանակաշրջանում իր տեղի համար ներկայացնում է բարձրագոյն իշխանութիւնը, բայց այն Գործադիր Կոմիտէն, որ ընտրւում է, նահանգի, գաւառի և կամ վիճակի Խորհուրդների Համագումարի կողմից, ենթարկւում է բարձրագոյն իշխանութեան, այսինքն նոյն Խորհուրդների Համագումարի իշխանութեան:

Նահանգի Գործադիր Կոմիտէն, որ ընտրւում է նահանգային Խորհուրդների Համագումարին, քաղկացած է ոչ աւելի քան 25 անդամից, իսկ վիճակայինները—10-ից ոչ աւելի: Գործադիր Կոմիտէների անդամների փոքրաթիւ քանակը ոչ միայն վատ ազդեցութիւն չի անում գործի վրայ, այլ ընդհակառակը նպաստում է գործի յաջողութեանը, Գործադիր Կոմիտէի փոքրաթիւ անդամները աւելի արդիւնաւէտ կաշխատեն, նրանք աւելի շուտ կը հասկանան միմիանց:

### ՊԱՏԳԱՍԱԻՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

57. Պատգամաւորների Խորհուրդներ կազմւում են՝

ա) Քաղաքներում—իւրաքանչիւր 1000 բնակչին 1 պատգամաւոր հաշւելով, բայց ընդհանուր առմամբ 50-ից ոչ պակաս և 1000-ից ոչ աւելի:

բ) Գիւղերում (շէնքերում, գիւղերում, ստանիցաներում, 10,000-ից ոչ պակաս բնակչութիւն ունեցող քաղաքներում, առւններում, ագարակներում և այլն)—իւրաքանչիւր 100 բնակչին 1 պատգամաւոր, բայց ամեն գիւղին 3-ից ոչ պակաս և 50 ոչ աւելի պատգամաւոր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Այն գիւղերում և տեղերում, ուր հնարաւոր է այս ձևով կազմակերպել, վարչական խնդիրները կը վճուեն նոյն գիւղի կամ տեղի ընտրողների ընդհանուր ժողովում անմիջական կերպով:

58. Ընթացիկ աշխատանքի համար Պատգամաւորների Խորհուրդը իր միջից ընտրում է գործադիր մարմին (Գործադիր Կոմիտէ) գիւղերում՝ 5 հոգուց ոչ աւելի, իսկ քաղաքներում իւրաքանչիւր 50 անգամ մին 1 հոգի, բայց 3-ից ոչ պակաս և 15-ից ոչ աւելի (Պետերբուրգ և Մոսկւա—40-ից ոչ աւելի): Գործադիր Կոմիտէն ամբողջովին պատասխանատու է իրեն ընտրող Խորհրդի առջև:

59. Պատգամաւորների Խորհուրդը հրաւիրւում է Գործադիր Կոմիտէի կողմից վերջինիս հայեցողութեամբ կամ Խորհրդի անդամների ոչ պակաս քան կէսի, պահանջով, քաղաքներում շաբաթը ոչ պակաս քան 1 անգամ և գիւղերում շաբաթը 2 անգամ:

60. Իր իրաւասութեան սահմանները մէջ, և հատուած 57 (Ծանօթութեան) մէջ նախատեսուած զէպքում, ընտրողների ընդհանուր ժողովը, ոերկայաթիւում է, ներկայ երկրամասի սահմանների մէջ, բարձրագոյն իշխանութիւնը:

Քաղաքների և գիւղերի Պատգամաւորների Խորհուրդը տեղական իշխանութեան հիմնական բլիշն (ячейка) են կազմում: Քաղաքային և գիւղական Խորհուրդները կազմւում են տեղական աշխատաւորների ընտրւածներից: Քաղաքներում իւրաքանչիւր 1000 բնակչից մի պատգամաւոր է ընտրւում, գիւղերում—իւրաքանչիւր 100-ին մէկ պատգամաւոր: Այս նորման հաստատւած է, որպէս փորձ, Խորհուրդների ընտրութեան համար: Քաղաքներում երբեմն ազգաբնակչութիւնը տասնապատիկ աւելի շատ է լինում, երբեմն քիչ: Դրա համար վերցւած է միջին թիւը:

Քաղաքային Խորհրդում պատգամաւորների թիւը 50-ից պակաս և 1000 աւելի չի կարող լինել. գիւղերում 3-ից պակաս և 50-ից աւել. սակայն օրէնքը թոյլ է տալիս, այն տեղերում, ուր հնարաւոր է այդ—գի-

ցուկ, փոքր գիւղերում, խնդիրները վճուել ընտրողների ընդհանուր ժողովում, այդ ձևը թէ աւելի դեմոկրատական է և թէ աւելի պարզ:

Սորհուրդները իրենց միջից ընտրում են Գործադիր Կոմիտէներ, 58-րդ հատածի մէջ ցոյց տրւած նորմայով: Գործադիր Կոմիտէն պատասխանատու է Սորհրդի առջև:

### ՏԵՂԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

61. Շրջանային, նահանգական, գաւառական և վիճակային Սորհրդային իշխանութեան մարմինների, ինչպէս և Պատգամաւորների Սորհուրդների գործունէութեան առարկան են կազմում:

ա) Սորհրդային իշխանութեան համապատասխան բարձրագոյն մարմինների որոշումների կիրառումը կեանքի մէջ:

բ) Միջոցներ ձեռք առնել տեղական կուլտուրան և տնտեսութիւնը բարձրացնելու համար:

գ) Այն բոլոր խնդիրների լուծումը, որ գուտ-տեղական նշանակութիւն ունեն:

դ) Սորհրդային գործունէութեան միացումը տեղի սահմանների մէջ:

62. Սորհուրդների Համագումարներին և Գործադիր Կոմիտէներին իրաւունք է տրւում վերահսկելու տեղական Սորհուրդների գործունէութեան վրայ, (այսինքն, Շրջանայիններին—նոյն շրջանի բոլոր Սորհուրդների վրայ վերահսկելու իրաւունքը, նահանգականներին—նոյն նահանգի բոլոր Սորհուրդների վրայ, բացի քաղաքացիներից, որոնք չեն մտնում գաւառական համագումարների կազմի մէջ, և այլն), իսկ շրջանային նահանգական համագումարներին և նրանց Գործադիր Կոմիտէներին բաւում է տրւում նրանց շրջաններում գործող Սորհուրդների որոշումները բեկանել, կարևոր դէպքերում այդ մասին տեղեկացնելով Սորհրդային Կենտրոնական իշխանութեան:

63. Սորհրդային իշխանութիւնների մարմինների վրայ զբաւած խնդիրների իրագործման համար Սորհուրդներին (քաղաքային և գիւղական) և Գործադիր Կոմիտէներին (շրջանային, նահանգական, գաւառական և վիճակային) կից համապատասխան բաժանմունքներ են կազմում, բաժանմունքների կառավարիչներ դնելով նրանց գլխին:

Իսկ ի՞նչ է տեղերի Սորհրդային իշխանութեան կոչումը նախ և առաջ այն, որ նա ճշտութեամբ ու անշեղ կերպով հեանքի մէջ իրագործէ Սորհրդային Կենտրոնական իշխանութեան որոշումները: Կենտրոնական իշխանութեան որոշումները տեղերում կիրառելու մէջ եղել են և լինում են թերութիւններ: Մինչև վերջին ժամանակներս Սորհուրդները տեղերում իրենք իրենց գլխի էին աշխատում և դրա հետևանքն այն էր լինում, որ շատ անդերում հարցերը Կենտրոնին հիմնովին հակառակ էին վճռում: Այդ բանից

կարելի է խուսափել միայն այն ժամանակ, երբ տեղական իշխանութիւնը կը հետևի Կենտրոնական Կառավարութեան որոշումներին:

Բացի այդ տեղական Սորհրդային իշխանութեան վրայ մի հսկայական ստեղծագործող աշխատանքի պարտականութիւն է ընկնում—հարկաւոր է հոգ տանել բարձրացնելու տեղական տնտեսութիւնը, բարձրացնել քաղաքացիների զարգացումն ու գիտակցութիւնը: Ժողովրդական տնտեսութիւնը պատերազմի ընթացքում բոլորովին քայքայել է՝ կամուրջները, ճանապարհները—բոլորը քար ու քանդ են եղել: Դպրոցները, հիւանդանոցները, որբանոցները—բոլորը անպէտքացի են, բաց ի թող են արւած և աւերւած. շատ դէպքերում կարիք կը լինի ամեն բան նորից սկսել:

Փաղաքային ու գիւղական տնտեսութիւնը նոր հիմքերով կարգի դնելը դժւար է: Դժւար է այն պատճառով, որ հարկ կը լինի հինը քանդել ամբողջովին և կառուցել նորը, սոցիալիստականը:

Քաղաքներում մասնաւոր սեփականութիւն կազմող ամբողջ տնտեսութիւնը անցնում է Սորհուրդների ձեռքը: Արդիւնաբերութիւնը, առևտուրը, կրթութիւնը, քաղաքային շինարարութիւնը—այդ բոլորը պիտի լինի Սորհուրդների ձեռքին: Գիւղերում էլ շատ գործ կայ անելու: Հողը անցաւ գիւղացիների ձեռքը, բայց հարկաւոր է բաժանելու և մշակելու ձևը գիտենալ, իսկ այս բոլորը գլուխ բերելը—բաւական դժւար գործ է: Դրա վրայ աւելացրու համայնական տնտեսութեան կազմակերպումը, չունևորների միութիւնը, այս բոլորը անյետաձգելի հարցեր են, որ միմիայն տեղական Սորհուրդները կարող են վճուել:

Սորհրդային իշխանութեան բարձրագոյն մարմինները պարտաւոր են հետևել, որ տեղական Սորհուրդները ճշտութեամբ կատարեն Կենտրոնական իշխանութեան որոշումները: Գաւառական Գործադիր Կոմիտէի պարտականութիւնն է հսկել իր գաւառի վիճակային և գիւղական Սորհուրդների գործունէութեան վրայ:

Շրջանային իշխանութեան և նահանգական Սորհրդային մարմինները բացի իրենց շրջանի կամ նահանգի մէջ մտնող Սորհուրդների գործունէութեան վրայ հսկելուց, կարող են նաև այդ Սորհուրդների վճիռները բեկանել, եթէ նրանք չեն համապատասխանում Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի որոշումներին: Այս տեսակ դէպքեր վերջին ժամանակներս շատ են եղել: Տեղական Սորհուրդը կամ Գործադիր Կոմիտէն, կտրւած լինելով Կենտրոնից, շատ անգամ այնպիսի վճիռներ են անցկացնում, որ չեն համապատասխանում Կենտրոնական կառավարութեան որոշումներին:

### ԱԿՏԻ ԵՒ ՊԱՍՍԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ.

64. Սորհուրդների մէջ ընտրելու իրաւունք ունեն, անկախ իրենց հաւատից, ազգութիւնից մշտաբնակութիւնից և այլն, Ռուսաստանի Սոցիալիստական Սորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութեան՝ տանտեսութիւնը տարին լրացրած, երկու սեռի հետևեալ քաղաքացիները.

ա) Արտադրողական և հասարակական օգտակար աշխատանքների միջոցաւ իրենց ապրուստը ձեռք բերող բոլոր անհատները, սնային աշխատանքով պարապողները, նախ նրանք, որոնք հաւատում են առաջինների աշխատանքի արտադրողականութեան, այն է՝ ամեն տեսակի ու կարգի բանւորներն ու պաշտօնեաները, որ աշխատում են արդիւնաբերութեան, առևտուրի, գիւղատնտեսութեան մէջ և այլն, գիւղացիները և հողագործ—կուլակները, որ սեփական շահի համար չեն օգտւում վարձու աշխատանքից:

բ) Խորհրդային բանակի և նաւատորմի զինւորները:

գ) Այն քաղաքացիները, որ պատկանում են 64-րդ յօդւածի 1 և 2 կէտերում յիշւած կարգին, և որոնք այս կամ այն չափով կորցրել են աշխատելու ընդունակութիւնը:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. 1.—Տեղական Խորհուրդները կարող են, Կենտրոնական իշխանութեան թոյլտուութեամբ, ներկայ յօդւածում որոշած տարիքի չափը պակսեցնել:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 2.—Ակտիւ և պասսիւ ընտրական իրաւունքից օգտւում են նաև այն անհատները, որ յիշւած են 20-րդ յօդւածի մէջ և, որոնք չեն պատկանում Ռուսաստանի քաղաքացիների թւին:

Յարիզմի տիրապետութեան ժամանակ Պետական դոմայի ընտրութիւններին մասնակցում էին 25 տարին լրացնողները միայն: Յարական սպասաւորները վախենում էին երիտասարդներից,—նրանք աւելի յեղափոխական են, նրանք աւելի շուտ են ըմբոստանում ճնշման ու ստրկութեան դէմ: Ընտրութիւններին կանայք չէին կարող մասնակցել: Բանւորների ու գիւղացիների իրաւունքները չափազանց սահմանափակ էին:

Բուրժուազիայի տիրապետութեան ժամանակ Սահմանդիր ժողովի ընտրութիւններին մասնակցում էին բոլորը, ընտրութիւնները կատարւում էին գաղտնի, ծածկւած ծրարներով, ուղղակի Սահմանադիր ժողովին:

Թւում էր, թէ դրանից լաւ էլ ի՞նչ կարող էր լինել: Սակայն այլ բան դուրս եկաւ, մեծ թերութիւններ երևան եկան,—ընտրւեցին աշխատաւոր ժողովրդի թշնամիները, այսօրւան հակա-յեղափոխականները:

Դրա պատճառն այն էր, որ ընտրութիւններն ազատ չէին կատարւում,—բուրժուազիան, մենշևիկները և աջ էս-էրները իրենց գործն էին տանում. յուսահատ ազիտացիա և հալածանք էին մղում բանւորների և գիւղացիների իսկական ներկայացուցիչների դէմ և բացի այդ ընտրութիւններին մասնակցում էին նաև ոչ աշխատաւորները, ուրիշի աշխատանքով ապրողները՝ ունեւորներն ու կալւածատէրերը:

Խորհուրդների և Խորհուրդների Համառուսական Համագումարի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն Հանրապետութեան բոլոր քաղաքացիները, սակայն, որոնք ապրում են իրենց աշխատանքով և չեն օգտւում վարձու աշխատանքից: Բոլոր գիւղացիները, գիւղի չունեւորները, ով ինքն է վար ու ցանք անում և մշակներ չունի, կարող է ընտրել և ընտրւել: Կինը, որ տնային տնտեսութեամբ է պարապում, 18 տարին լրացրած

տղան ու աղջիկը,—բոլորը պարտաւոր են մասնակցել Խորհուրդների ընտրութիւններին:

Բացի բանւորներից ու գիւղացիներից ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն նաև զինւորներն ու նաւաստիները:

Բուրժուական օրէնքները թոյլ չեն տալիս զինւորներին ընտրական տուփերին մօտենալ: Ուկրայնայում, հէնց որ իշխանութիւնն անցաւ բուրժուազիայի ձեռքը, զինւորներին իսկոյն զրկեցին ընտրողական տուփերից: Խորհրդային Հանրապետութեան պաշտպանը, մեզանում, Խորհրդի ընտրութիւնների ժամանակ պէտք է առաջին շարքերում ընթանայ:

Խեղ—բանւորները (ИНВАЛИД) որ կորցրել են աշխատանքի ընդունակութիւնը, բայց միևնոյն ժամանակ ուրիշի աշխատանքը սեփական շահու համար չեն շահագործում, կարող են Խորհուրդների և Համագումարների ընտրութիւններին մասնակցել: Միթէ կարելի է աշխատելու ընդունակութիւնը կորցրած բանւորին զրկել ընտրելու իրաւունքից: Ո՛չ, նա առաջինը պիտի մօտենայ ընտրական տուփին:

65. Չեն կարող ընտրել և ընտրւել, թէկուզ նրանք և մտնեն վերոյիշեալ կարգերից որևէ մէկի մէջ՝

ա) նրանք, որ սեփական շահու համար օգտւում են վարձու աշխատանքից:

բ) նրանք, որոնք ապրում են առանց աշխատանքի ձեռք բերած եկամուտով, այն է՝ դրամագլխի տոկոսներով, ձեռնարկութիւնների եկամուտներով, կայքերից ստացած եկամուտներով և այլն:

գ) Մասնաւոր վաճառականները, առևտրական ու վաճառականական միջնորդները:

դ) Վանականները եկեղեցական ու կրօնական պաշտամունքին ծառայող հոգևորականները:

ե) Նախկին ոստիկանութեան ծառայողներն ու ազնետները, ժանդարմական յատուկ մարմնի և պահպանութեան բաժանմունքի պաշտօնեաները, նոյնպէս և Ռուսաստանի նախկին կայսերական տան անդամները:

զ) նրանք, որ որոշեալ կարգի հիման վրայ ճանաչւած են, որպէս հոգեկան հիւանդ և կամ խելագար: նոյնպէս և խնամակալութեան տակ գտնւողները:

է) նրանք, որ դատապարտւած են շահադիտական և արատ բերող յանցանքների համար՝ օրէնքի և կամ դատաստանական դատավճռի սահմանած ժամանակի ընթացքում:

Ուրեմն ո՞վ չի կարող ընտրել ու ընտրւել:

Նա, ով մշակներ ունի և ապրում է նրանց աշխատանքով: Կապիտալիստը, որ Ֆաբրիկայում բանւորներ է պահում: Վաշխառուն, որ հողը ուրիշի ձեռքով է մշակում,—աշխատաւոր սրբիալիստական կառավարութեան մէջ այս սղբուկները չեն կարող մասնակցել Խորհուրդների և Համագումարների ընտրութիւններին: նրանք բոլորը օգուտ են ստանում.

կապիտալիստը բանուորին օրական 15 ո. է վճարում, իսկ նրա պատրաստած ապրանքի փոխարէն ստանում է 25 ո.: Գիւղական վաշխառուն վարում, ցանում և քաղում է հացը մշակների ձեռքով և հացը ծախում է շահագրտական գներով, ինքը բոլորովին չի աշխատում: Նրանք բոլորը օրէնքով զրկւում են ընտրողական իրաւունքից: Բուրժուական կառավարութեան մէջ, ուր պարլամենտները, պետական խորհուրդները, սահմանադիր ժողովները հարուստների շահերն են հետապնդում, այնտեղ բանուորների ու գիւղացիների մեծագոյն մասը մի խումբ տղրուկների շահերի համար զրկւում է ընտրողական իրաւունքից: Մեզանում բուրժուականների և վաշխառուների խմբակը, յանուն ամբողջ աշխատաւոր ժողովրդի շահերի, զրկւում է ընտրողական իրաւունքից:

Եւ ոչ միայն կապիտալիստներն ու վաշխառուներն են զրկւում այդ իրաւունքից, այլ և բոլոր պարտաւոյժներն ու տղրուկները, որ առկոսներով խեղդում են ժողովրդին, բոլոր նրանք, որ եկամուտներ են ստանում տներից, կալածներից և ձեռնարկութիւններից, որ կամ իրենք են յափըշտակել, և կամ իրենց հայրերն ու պապերը:

Նոյնպէս ընտրելու իրաւունք չունեն խանութպանները, շահագէտներն ու չարչիւները, Նրանք բոլորը—աշխատաւորների երդեւալ թշնամիներն են, ծայրահեղ հակա-յեղափոխականներ:

Տէրտէրները, վարդապետները,—այս բոլոր համաշխարհային հաց-կատակները ոչ մի դէպքում չը պիտի մասնակցեն Խորհուրդների ընտրութիւններին: Եկեղեցին անշատուած է պետութիւնից, ուստի և տէրտէրները, վարդապետները մասնակցութիւն չպիտի ունենան պետական գործերին: Նրանց գործն է յիմարացնել ժողովուրդը, քանի տգէտ է այդ ժողովուրդը և դեռ չի հասկացել տէր-տէրական խաբէութիւնները:

Օխրանսիկները, ոստիկանները, ժանդարմները, կայսերական բոլոր թիկնապահները, ոչ միայն չեն կարող մասնակցել Խորհուրդների ընտրութիւններին, այլև նրանց խիստ հսկողութեան տակ պիտի առնել և հակա-յեղափոխական առաջին իսկ քայլին նրանց՝ աշխատաւոր ժողովրդի հետ ունեցած յարաբերութիւնը բոլորովին պէտք է խզել:

Ընտրութիւններին չեն կարող մասնակցել գողերը, աւազակները ինչպէս նաև շահագրտութեան և այլ արատաւոր յանցանքների համար դատապարտւածները:

**ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ԿԱՏԱՐԵԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

- 66. Ընտրութիւնները կատարւում են ընդունւած սովորութեան համաձայն, տեղական Խորհուրդների նշանակած օրերը:
- 67. Ընտրութիւնները կատարւում են ընտրողական Կոմիտիայի և տեղական Խորհրդի ներկայացուցչի ներկայութեամբ:
- 68. Այն դէպքերում, երբ խորհրդային իշխանութեան ներկայա-

ցուցչի ներկայութիւնը տեխնիկական տեսակէտով անհնարին է, նրան փոխարի նում է ընտրողական Կոմիտիայի նախագահը, իսկ վերջինիս բացակայութեան պարագային ընտրողական ժողովի նախագահը:

69. Ընտրութիւնների ընթացքի և արդիւնքի մասին արձանագրութիւն է կազմւում ընտրողական Կոմիտիայի և Խորհրդի ներկայացուցչի ստորագրութեամբ:

70. Ընտրութիւններ կատարելու մանրամասն ծրագիրը, ինչպէս և արհեստակցական և այլ բանուորական կազմակերպութիւնների մասնակցութիւնը այդ ընտրութիւններին որոշուած է տեղական Խորհուրդների կողմից համաձայն Հ. Կ. Գ. Կ. հրահանգի:

Երբ կատարել ընտրութիւնները,—դա կախւած է այն բանից, թէ ինչ տեսակ կարգ կը որոշւի ընտրութիւնների համար, բայց լաւագոյնն է ընտրութիւնները կատարել տօներին, երբ աշխատանք չի լինում:

Անհրաժեշտ է հետևել, որ ընտրութիւնները կատարւեն կանոնաւոր որ ոչ մի սխալմունք չը լինի, ապա թէ ոչ դժգոհները, օգտւելով եղած սխալից, կը բողոքեն ընտրութիւնների դէմ: Ուստի անհրաժեշտ է, որ ընտրութիւնների ժամանակ ներկայ լինի տեղական Խորհրդի ներկայացուցիչը և կամ Ընտրողական Կոմիտիայի նախագահը, իսկ եթէ այդ էլ հնարաւոր չէ, այն ժամանակ ընտրողական ժողովի նախագահը: Յամենայն դէպս կարևոր է, որ ընտրութիւններին լիազօր և պատասխանատու որևէ մէկը ներկայ լինի: Այս լիազօր ընկերները ընտրութիւնների ընթացքի և արդիւնքի մասին մանրամասն արձանագրութիւն են կազմում:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՏՈՒԳԵԼՈՒ, ԲԵԿԱՆԵԼՈՒ ԵՒ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐԸ ՅԵՏ ԿԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

- 71. Ընտրութիւնների վերաբերեալ բոլոր նիւթերը յանձնւում են համապատասխան Խորհրդին:
- 72. Խորհուրդը ընտրութիւնները ստուգելու համար նշանակում է мандатная Կոմիտիա:
- 73. Ստուգման արդիւնքի մասին мандатная Կոմիտիան ղեկուցում է Խորհրդին:
- 74. Խորհուրդն է որոշում վիճելի թեկնածուները հաստատելու խնդիրը:
- 75. Այս կամ այն թեկնածուն չը հաստատելու պարագային Խորհուրդը նոր ընտրութիւններ է նշանակում:
- 76. Ընտրութիւնները ընդհանրապէս անկանոն լինելու դէպքում, բեկանելու հարցը որոշում է հետևեալ՝ ըստ հերթի աւելի բարձր Խորհրդային իշխանութեան մարմինը:
- 77. Խորհրդային ընտրութիւնների համար ամենաբարձր վճարելի

ատեանը ներկայացնում է Հ. Կ. Գ. Կ.:

78. Ընտրողները ամեն ժամանակ իրաւունք ունեն Խորհուրդ ուղարկած իրենց պատգամաւորին յետ կանչել և նոր ընտրութիւններ կատարել, համաձայն ընդհանուր հիմունքների:

Երբ ընտրութիւնները կատարւած վերջացած են, ամբողջ նիւթը յանձնուում է համապատասխան Խորհրդին որտեղ և կատարուում է վերջնական ստուգումը: Խորհուրդը որոշում է բոլոր վիճելի հարցերը: Այն դէպքում, երբ Խորհուրդը չի կարողանում հարցը վճռել, նա գործը յանձնում է բարձր իշխանութեան, մինչև իսկ Հ. Կ. Գ. Կ.:

Կարևոր է նաև այն պարագան, որ ընտրողները կարող են Խորհուրդ ուղարկած իրենց պատգամաւորին յետ կանչել և նոր ընտրութիւններ կատարել:

Բուրժուական պարլամենտից պատգամաւորին չէր կարելի յետ կանչել: Արտայայտում էր նա, արդեօք, իրեն ընտրողների կամքը, թէ ոչ,— միևնույն էր, մինչև ժամանակաշրջանը լրանալը նա մնում էր: Այդպէս էր մեր ցարական բուրժուական Սահմանադիր ժողովում:

Բայց հրքան արդար է այս:

Վերցնենք, օր. համար, Սահմանադիր ժողովի ընտրութիւնները: Շնորհիւ Կերենսկու և աջ էս-էրներ խորամանկ քաղաքականութեան, որոնք ձարպիկ կերպով իրենց կուսակցական ընկերներին—ձախ էս-էրներին «մշակեցին», զիւղերում ճնշող մեծամասնութեամբ ընտրեցին աշերը, այսօրւան մարդասպաններն ու հակա-յեղափոխականները: Քաղաքներում, շնորհիւ կոմունիստների յուլիսեան հալածանքների, թանկութիւններն ամեն տեղ չըկարողացան իրենց իսկական ներկայացուցիչներին ընտրել: Այնպէս եղաւ, ինչպէս ձեռնարկ էր ունեւորներին:

Մի ամիսն անց միայն զիւղն ու քաղաքը զգացին, որ իրենք խաբւած են աշխատաւոր ժողովրդի մեծագոյն մասը չէին կամենում, որ համաձայնականներն ու հակա-յեղափոխականները իրենց ներկայացուցիչները լինեն: Այս բանը նրանք փառաւորապէս հաստատեցին հոկտեմբերեան յեղափոխութեան և Խորհուրդների Զ-րդ համագումարի ընտրութիւնների ժամանակ մեծ մասամբ կոմունիստներ ընտրելով:

Որպէսզի այդ բանը չը կրկնուի, Սոցիալիստական Հանրապետութեան օրէնքը ընտրողներին թոյլ է տալիս իրենց ներկայացուցիչն յետ կանչել, եթէ վերջինս զազարում է նրանց կամքի արտայայտիչը լինել:

### ԵԼՄՏԱՅՈՅՅԱՅԻՆ (БЮДЖЕТ) ԻՐԱԻՈՒՆՔ

79. Ռ. Ս. Խ. Յ. Հ. Ֆինանսական քաղաքականութիւնը աշխատաւորների զիկտատուրայի ներկայ անցողական վայրկեանում հիմնական նպատակ ունի—սեփականազուրկ անել բուրժուազիային և հա-

րստութիւնների, արտադրութեան ու բաժանման գործում Հանրապետութեան քաղաքացիների ընդհանուր հաւասարութեան համար պայմաններ նախապատրաստել: Այդ նպատակն իրագործելու համար, նա Խորհրդային իշխանութեան մարմինների տրամադրութեան տակ է դրնում բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Խորհրդային Հանրապետութեան թէ տեղական և թէ համապետական կարիքներին բաւարարութիւն տալու համար, ոտնակոխ անելով վնոյնիսկ մասնաւոր սեփականութեան իրաւունքը:

Ցարերի և ունեւորների պետական գանձարանը հիմնւած էր չունեւորներից շորթած հարկերի վրայ, ժողովրդի հարբեցողութեան վրայ և այլն:

Գիւղի չունեւորի կաշին էին պլոկում, նրա վերջին կոլմ էին խլում հարկերի փոխարէն, բանւորից էլ շատ բան էին վերցնում պետական ծախքերը ծածկելու համար:

Գիւղացիներից ու բանւորներից միլիոններով չը ծածկւած (ուղղակի) հարկեր էին վերցնում, իսկ ծածկւած (անուղղակի) հարկեր աւելի շատ: Ամեն բանի համար՝ ծխախոտի, շաքարի, լուցկու համար պետական գանձարանը չունեւորներից հսկայական գումարներ էր վերցնում: Եւ պետական գանձարանի մուտքը այսպիսով կողմում էր ունեւորների կողմից չունեւորին կողոպտելով: Բաւական չէր, որ բանւորին կողոպտում էին Ֆաբրիկայում, իսկ զիւղում կաւածատէրերը կողոպտում էին զիւղացուն,—նրանց զիւղ պլոկում էին պետական գանձարանը լեցնելու համար, որպէսզի այդ փողերով թնդանօթներ, զրահանաւեր, պալատներ և այլն շինեն: Կողոպտում էին չունեւորներին, և բոլորը ծախսում հարուստների վրայ, որպէսզի նրանց համար հանգիստ կեանք ստեղծեն, աւելացնեն նրանց եկամուտները:

Բոլոր երկրների ֆինանսական քաղաքականութիւնը հարուստների կողմից աղքատներին կողոպտելու քաղաքականութիւնն է:

Սոցիալիստական Հանրապետութեան ֆինանսական քաղաքականութիւնը այնպէս պէտք է լինի, որ եկամուտների և հասարակական ծախքերի բաժանման մէջ բոլոր քաղաքացիները հաւասար լինեն:

Հին կարգերի ժամանակ ունեւորները շատ են կողոպտել ու փողերը պահել և այժմ, երբ երկիրը սնանկացել է և երկրի հարստութիւնները ծախսել են պատերազմի վրայ և կամ մտել են հարուստների զրպանները,—այժմ ժողովրդական գանձարանն այնպէս պէտք է կազմակերպել, որ նա չունեւորների բարեկեցութիւնն ապահովէ, և ամենից առաջ ի հաշիւ ունեւորների:

Այժմ աւելի քան դրամ է հարկաւոր ժողովրդական քայքայւած տնտեսութիւնը վերականգնելու համար: Ի՞նչպէս և ո՞ւմից վերցնել դրամ: Գուցէ այնպէս, ինչպէս այդ ուղում են անել Ուկրայնայի կաւածատէրերն ու վաշխաւուները—այն է օղիով կրկին հարբեցնել ժողովրդին, կրկին չունեւորներին կողոպտել: Ուրիշ ի՞նչ կերպ կարելի է անել:

Այս չորս տարւայ պատերազմի արդիւնքն այն է, որ ժողովրդական տնտեսութիւնը քայքայւել է: Ո՞ւմ կողմից և ո՞ւմ շահերի համար էր տար-

ուում այս պատերազմը: Բուրժուաների կողմից և նրանց թայանչիական շահերի համար: Ո՞վ է միլիտաններ դիզել, տալով բանակին փթած կաշի, աւել (СУКНО) և հոտած միս, պատրաստելով թնդանօթներ ու հրացաններ: Կապիտալիստներն ու խանութպանները: Եւ քանի որ այդ այդպէս է, այժմ թող նրանք հրապարակ հանեն ստացած հսկայական օգուտները՝ երկաթուղիները և խճուղիները բարեկարգելու համար, քաղաքներն ու գիւղերը բարեկարգելու համար: Իսկ եթէ չտան—պէտք է խլել այդ աւարը, որովհետեւ ժողովուրդը կարիք ունի նրան:

Եւ օրէնքն այս պարագայում թոյլ է տալիս տեղական խորհրդային իշխանութեան ունևորների գրպանիմ դիպչել: Ուրիշ կերպ չի էլ կարելի: Եւ միթէ բուրժուան ժողովրդական կարիքների համար ինքնակամ փող կը տայ, երբ նա Ռուսաստանի վրայ նայում է, որպէս մի օտար երկրի վրայ: Նրա համար հայրենիքն այնտեղ է, որտեղ կարելի է գրպանը հաստացնել, իսկ այնտեղ, ուր չի կարելի այդ տնել, օտար է նրա համար և «իր» փողերը չի ուղում ծախսել, և վերջապէս չի էլ վարժած այդ անելու, նա գիտէ միայն թալանել բանւորին ու գիւղացուն:

Ուրեմն պէտք է վերցնել, սակայն վարդապետութեամբ: Նախ և առաջ կապիտալիստին և կալւածատիրոջը պէտք է ստիպել եկամտային հարկ վճարել, հարկ՝ կապիտալի և ժառանգութեան համար: Բայց դա էլ քիչ է մինչև հիմա թալանածի և թագցածի մի մասն էլ պէտք է խլել, սակայն այդ պէտք է անել կազմակերպած, Կենտրոնական իշխանութեան գիտութեամբ:

80. Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութեան պետական եկամուտներն ու ծախքերը մտնում են համապետական ելմտացոյցի (բիւջետ) մէջ:

81. Խորհուրդների Համառուսական Համագումարը և կամ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէն որոշում են, թէ ինչ տեսակի եկամուտներ ու հարկեր են մտնում համապետական ելմտացոյցի մէջ և ինչպիսիներն են տրւում տեղական Խորհուրդների տրամադրութեան տակ. նոյնպէս որոշում են տուրքի սահմանները:

82. Խորհուրդները հարկեր ու տուրքեր են նշանակում բացառապէս տեղական տնտեսութեան կարիքների համար: Համապետական պէտքերը հոգացում են այն միջոցներից, որ տրւում են համապետական գանձարանից:

83. Պետական գանձատան միջոցներից ոչ մի ծախք չի կարելի անել, մինչև որ պետական եկամուտների ու ծախքերի ելմտացոյցի մէջ, դրա համար վարկ չի բացւել ու ներկայացւել և կամ Կենտրոնական իշխանութեան առանձին որոշումը չը լինի:

Մինչև հոկտեմբերեան յեղափոխութիւնը ճվ էր որոշում մեր պետութեան եկամուտները: Ունևորները—կապիտալիստները, կալւածատէրերը, տէրտէրները և միւս ձրիակերները: Դրա համար էլ մեր պետութեան բոլոր եկամուտները չունևորների գրպանից էր դուրս գալիս: Ամբողջ պետական

գանձարանը կազմուում էին գիւղը կողոպտելով և քաղաքի բանւորներին շահագործելով:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Սոցիալիստական Ռուսաստանում պետական բոլոր եկամուտներն ու ծախքերը որոշում են ոչ թէ ցարերը, բուրժուաները և նրանց վարձկանները, այլ ինքը ժողովուրդը— Խորհուրդների Համառուսական Համագումարների և կամ նրա Կենտրոնական Գործադիր Կոմիտէի միջոցով: Այս ժողովրդական մարմիններն են, որ որոշում են, թէ ինչ ձևով պէտք է կազմել գանձարանը. չունևորներին պէտք է կողոպտել, թէ հարուստներից հարկեր վերցնել: Բոլոր հարկերն ու մուտքերը առանց որի և ոչ մի պետութիւն չի կարող գոյութիւն ունենալ, պէտք է վերցնել նրանցից, որոնք աւելի շատ են ստանում, և երբ մեր երկրում այլևս չեն լինի ազգատներ ու հարուստներ, երբ բոլորը հաւասար կը լինեն,—միայն այն ժամանակ պետութեան բոլոր ծախքերը հաւասարապէս կընկնեն բոլորի վրայ, և պետական գանձարանը կը լեցւել երկրի ամբողջ ազգաբնակչութեան տւած հարկերով,—գլխաւորապէս երկրի ամբողջ տնտեսութիւնից ստացւած եկամուտներով:

Մինչև այժմ ժողովրդական ամբողջ տնտեսութիւնը գանւում էր ունևորների ձեռքին, բոլոր ֆաբրիկաները, հողերը և բնական հարստութիւնները շահագործւում էին նրանց շահերի համար, իսկ պետութիւնը,—գլխաւորապէս՝ զօրքը, նաւատորմը և չինոյսիկները,—պահւում էին չունևորների հաշւին: Այժմ, երբ բոլոր ֆաբրիկաներն ու հողերը պետութեան ձեռքն են անցել, այն է ժողովրդի ձեռքը, ամբողջ մուտքը, բացի աշխատավարձից և հում նիւթերի համար եղած ծախքերից, այդ ամբողջ օգուտը կանցնի պետութեան ձեռքը, այսինքն ամբողջ ժողովրդի ձեռքը: Ուստի և կարիք չի լինի առաջւայ նման աւելորդ տուրքեր ու հարկեր հաւաքել ժողովրդից:

Բայց ամեն մի եկամուտ, որտեղից ուղում է նա ստացւած լինի, այդ միևնոյն է, պէտք է համապատասխան գանձարանը մտնի, միայն հարկերից ու եկամուտներից մի քանիսը տեղական Խորհրդային իշխանութեան տրամադրութեան տակ կարող են լինել: Եկամուտներից ու տուրքերից, որոնք պէտք է մտնեն ընդհանուր գանձարանը և որոնք տեղական,—այդ բանը պէտք է որոշէ Խորհուրդների Համառուսական Համագումարը և Կենտրոնական Գործադիր Կոմիտէն, բացի այդ բարձրագոյն իշխանութեան այս մարմինները որոշում են նաև ազգաբնակչութեան հարկատուութեան սահմանները:

Իսկ տեղական իշխանութիւնը իր տեղի ժողովրդի վրայ հարկեր ու տուրքեր է նշանակում տեղական կարիքների համար: Իսկ այն ծախքերը, որտեղ էլ ուղում են նրանք տեղի ունենան, եթէ համապետական նշանակութիւն ունեն, համապետական գանձարանից պէտք է բաց թողնւեն: Բայց այս գանձարանից և ոչ մի ծախք չի կարելի անել, եթէ նա չի մտել պետական ծախքերի ու եկամուտների ելմտացոյցի մէջ: Միայն շատ բացա-

ուիկ դէպքերում կարելի է շեղում անել, այն էլ Կենտրոնական Իշխանութեան կարգադրութեամբ:

84. Ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող կարիքներն են: Բարձրագոյն աստիճանի պատշաճաւոր ժողովրդական Կոմիտարիատները պետական գանձարանից վարկ են բաց անում և դնում տեղական Խորհուրդների տրամադրութեան տակ:

85. Պետական գանձատան միջոցներից Խորհուրդների համար բաց թողնւած վարկերը, ինչպէս նաև տեղական կարիքների նախահաշիւների վրայ հաստատուած վարկերը կարող են ծախսուել նախահաշիւ ստորաբաժանումների (հատուածների ու յօդուածների) սահմանների մէջ արդէն նախօրօք որոշուած նպատակի համար և չեն կարող որևէ ուրիշ նպատակների համար ծախսուել, առանց Հ. Կ. Գ. Կ. և Ժ. Կ. Խ. կարգադրութեան:

86. Տեղական Խորհուրդները տեղական կարիքների համար կազմում են եկամուտների ու ծախքերի կիսամեայ և միամեայ նախահաշիւներ: Գիւղական ու վիճակային Խորհուրդների և գաւառական համագումարներին մասնակցող քաղաքների Խորհուրդների նախահաշիւները, ինչպէս նաև Խորհուրդային իշխանութեան ղաւառական մարմինների նախահաշիւները հաստատուում են համապատասխան նահանգային և շրջանային համագումարների և կամ նրանց Գործադիր Կոմիտէների կողմից: Խորհուրդային իշխանութեան քաղաքային, նահանգական և շրջանային մարմինների նախահաշիւները հաստատուում են Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և Ժողովրդական Կոմիտարիատների Խորհրդի կողմից:

87. Նախահաշիւների մէջ չը նախատեսուած ծախքերի համար, ինչպէս և այն դէպքում, երբ նախահաշիւով որոշուած չափը անբաւարար է լինում, լրացուցիչ վարկ ստանալու համար Խորհուրդները դիմում են պատշաճ ժողովրդական Կոմիտարիատներին:

88. Այդ դէպքում, երբ տեղական միջոցներն անբաւարար են տեղական կարիքների համար, տեղական Խորհուրդները անյետաձգելի ծախքերը ծածկելու համար անհնաժեշտ նպաստը կամ փոխատուութիւնը պետական գանձարանից կարող են ստանալ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և Ժողովրդական Կոմիտարիատների Խորհրդի թոյլտուութեամբ:

Հոկտեմբերեան յեղափոխութեան առաջին օրից սկսած, տեղական Խորհուրդների կարիքները բաւարարելու գործում շատ թիւրիմացութիւններ են եղել:

Տեղական Խորհուրդային իշխանութիւնը, փողի կարիք ունեցած ժամանակ, առանց այլ և այլութեան դիմում էր Պետական բանկը և կամ Ժողովրդական Կոմիտարիատների Խորհրդին, պահանջելով բաց թողնել, դիցուկ, այսօրան միլիոն ուրբի: Իսկ թէ ինչպէս և ինչի համար են ծախսուում այդ մի-

լիօնները,— շատ դէպքերում այդ մասին ոչինչ չէր ասուում: Փող է հարկաւոր և Կենտրոնական Իշխանութիւնը պարտաւոր է տալ: Այսպիսի կարգը անթոյլատրելի է: Եւ իւրաքանչիւր դիմող ընկերոջ ասուում էր, որ եղած գումարն ստանալու համար, անհրաժեշտ է նախահաշիւ կազմել, այսինքն ցոյց տալ, թէ ինչի համար են հարկաւոր փողերը:

Իայց շնորհիւ տեղական անբաւարար կազմակերպութիւնները, այդպիսի նախահաշիւներ կազմելը դժւար էր: Այժմ, երբ գործը կանոնաւորուել է, ամեն տեղ ֆինանսական բաժանմունքներ կան, որոնք արդէն սկսել են որոշել տեղական եկամուտներն ու ծախքերը: Նրանք որոշում են, թէ որ ծախքերը պիտի կատարեն համապետական գանձարանի հաշիւն, և որոնք տեղական գանձարանի: Այսպիսով բաւական դիւրացել է տեղական Խորհուրդների դրամական միջոցներ հայթայթելու խնդիրը:

Այժմ համապատասխան ժողովրդական Կոմիտարիատը տեղական Խորհրդին յատկացնում է անհրաժեշտ գումարներ: Այս փողերը պէտք է ծախսուեն այն կարիքների համար, որոնց համար տրուած են:

Ամեն մի տեղական Խորհուրդ կազմում է իր եկամուտների ու ծախքերի նախահաշիւը: Գիւղական և վիճակային Խորհուրդների ինչպէս և գաւառական քաղաքների Խորհուրդների նախահաշիւները հաստատուում են Նահանգական ու Շրջանային Համագումարների կողմից, իսկ Խորհուրդային աւելի խոշոր կազմակերպութիւնների նախահաշիւները հաստատուում են բարձրագոյն Կենտրոնական իշխանութեան կողմից: Եւ տեղական իշխանութիւնը իր ծախքերը պիտի անէ այս նախահաշիւների սահմանների մէջ:

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ԵՒ ԳՐՕՇԱԿԻ ՄԱՍԻՆ

89. Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. զինանշանը ներկայացնում է Կարմիր Ֆոնի վրայ, արևի ճառագայթների մէջ, ոսկէ մանգաղ և մուրճ, խաչաձև միմեանց վրայ դրած, կոթերը ներքև, շրջապատուած հասկերի պսակով, հետևեալ մակագրութեամբ.

ա) Ռուսական Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութիւն,

և բ) Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք:

90. Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. առևտրական ծովային և զինւորական դրօշակը կազմուած է կարմիր (բոսոր) գոյն կտաւից, որի ձախանկիւնում, ձողի վերևում տեղաւորուած են ոսկէ տառեր՝ Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. կամ վերտառութիւն Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիւ Հանրապետութիւն:

Իւրաքանչիւր պետութիւն իր զինանշանն սւ դրօշակը ունի, որով նա տարբերում է ուրիշ երկրներից: Ռուսական միապետութիւնն էլ առաջ ու-



13434

2013

« Ազգային գրադարան



NL0046844

